

**ՀԱՅԱՍՏԱՆԻ 3 ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ
(ՏԱՎՈՒՇ, ԼՈՌԻ և ՇԻՐԱԿ)
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՄ**

**ՓՈՒԼ II - ՇԻՐԱԿԻ, ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022-2025
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Ամիս Նոյեմբեր 2021թ.

Պատվիրատու՝ Ավստրիայի Չարգացման Գործակալություն
Խորհրդատու՝ ԱՄ փարթենըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ



Բովանդակություն

1	<u>ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>	3
1.1	ՆԱԽԱԴԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
1.2	ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	3
1.2.1	Տվյալների հավաքագրումը.....	3
1.2.2	Տվյալների մշակումը և ամփոփումը	4
2	<u>ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ</u>	5
2.1	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ.....	5
2.1.1	Գյուղատնտեսության ընդհանուր խնդիրներ.....	5
2.1.2	Կերարտադրության հիմնախնդիրը և լուծման հնարավոր սցենարը.....	6
2.1.3	Կայուն / կանաչ գյուղատնտեսության վարման խնդիրներ	7
2.2	ԿԱՅՈՒՆ / ԿԱՆԱԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՀԱՂԱԶՆԱՐՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ.....	8
2.3	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	9
2.4	ԿԱՅՈՒՆ / ԿԱՆԱԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	11
2.4.1	Բրազիլիայի օրինակը	11
2.4.2	Մեծ Բրիտանիայի օրինակը.....	12
2.4.3	ԵՄ Օրինակը	12
2.4.3.1	Ընդհանուր սկզբունքներ	12
2.4.3.2	ԳՅԶ հատուկ նպատակները	13
2.4.3.3	Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման գործիքակազմը.....	13
2.4.4	Շվեյցարիայի օրինակը.....	15
2.4.5	Ավստրիայի օրինակը	15
2.4.6	Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը անասնապահության ոլորտում	16
3	<u>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅԵԼԻ ԵՆԹԱՈՒՈՐՏՆԵՐԸ</u>	19
3.1	ԳԵՐԱԿԱՅԵԼԻ ԵՆԹԱՈՒՈՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	19
4	<u>ԿԱՅՈՒՆ / ԿԱՆԱԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>	20
4.1	ՏԵՍԼԱԿԱՆԸ	20
4.2	ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	20
5.	<u>ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>	33
6.	<u>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>	38

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԱԶԳ	Ավստրիական Չարգացման Գործակալություն
ԳԶՄՌ	Գյուղատնտեսության Չարգացման Մարզային Ռազմավարություն
ԳՀԶ	ԵՄ Գյուղատնտեսական Համընդհանուր Զաղաքականություն
ԵԿԳ	Եվրոպական Կանաչ Գործարք
ԵՄ	Եվրոպական Միություն
ԽԵԿ	Խոշոր եղջերավոր կենդանի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԽ	Մարզային Աշխատանքային Խումբ
ՊԳԿ	Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպություն
ՎԻԿ	Վնասատուների ինտեգրված կառավարում
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ABC ծրագիր	Բրազիլիայի ցածր ածխածնային գյուղատնտեսության ծրագիր

1 ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒԴԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՆԱԽԱԴԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«ԵՄ Կանաչ Գյուղատնտեսության Նախաձեռնությունը Հայաստանում ծրագիրը» (Ծրագիր) ֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից: Ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում Շիրակում, Լոռիում և Տավուշում:

Սույն առաջադրանքի իրականացման միջոցով և արդյունքում նախատեսվում է պատրաստել Գյուղատնտեսական շարգացման Մարզային Ռազմավարություններ (ԳԶՄՌ), որոնք կընդգրկվեն մարզերի 2017-2025թթ. շարգացման ռազմավարություններում, որպես գյուղատնտեսության բաժնի թարմացում 2022-2025 թվականների համար: Այս ռազմավարությունների կիրառությունը թույլ կտա ուղղորդել մարզային իշխանություններին՝ նրանց գործողություններում, ինչպես նաև բարելավել մարզային և տեղական իշխանությունների պլանավորման և պլանավորված գործողությունների իրագործման կարողությունները:

ԳԶՄՌ-ների ներքո անդրադարձ է կատարվել գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման հետևյալ կողմերին.

- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կառավարման բարելավում և արդյունավետության բարձրացում,
- Տեղական և մարզային մակարդակներում նորարարական, եկամտաբեր, ճկուն, խելացի և դիմակայուն գյուղատնտեսության զարգացման քաղաքականության և մոտեցումների ընդունում և կիրառում,
- Բարձրարժեք մշակաբույսերի և նոր արժեշիթաների հայտնաբերում և զարգացում,
- Բարձրարժեք արտադրության մեջ նոր տնտեսվարողների, ֆերմերների և ներդրողների ներգրավում,
- Հանրության և, մասնավորապես, ֆերմերների շրջանում կրթության և տեղեկատվության փոխանակման գործընթացի բարելավում,
- Տեղական և արտահանման նոր շուկաների բացահայտում և ընդլայնում,
- Բնության պահպանության և կլիմայի փոփոխությանն առնչվող հարցեր, որոնք վերաբերվում են նաև գյուղատնտեսության ոլորտին:

1.2 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.2.1 Տվյալների հավաքագրումը

ԳԶՄՌ-ների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

1. Փաստաթղթերի և երկրորդային տեղեկատվության ուսումնասիրություն: Ուսումնասիրվել է ՀՀ և Լոռու մարզի գյուղատնտեսության և հարակից այլ ոլորտների վերաբերյալ առկա տեղեկությունները՝ ներառյալ տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցներ, վիճակագրական տվյալներ և այլն:
2. Ինտենսիվ խմբային քննարկումներ մարզերի աշխատանքային խմբերի և այլ շահագրգիռ տեղեկացված անձանց և մասնագետների/փորձագետների հետ:
3. Դեմ առ դեմ անհատական քննարկումներ մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչների, առաջատար ֆերմերների, զարգացման նախաձեռնություններ իրականացնող մասնագետների հետ:

4. Համայնքային այցելություններ բացահայտված և սահմանված խնդիրների տեղական մակարդակում հավաստման նպատակով:

1.2.2 Տվյալների մշակումը և ամփոփումը

Հավաքագրված տեղեկատվության և առանձին տվյալների մշակումն ու ամփոփումն իրականացվել է հետևյալ հիմնական մեթոդների կիրառմամբ.

1. Հավաքագրված տեղեկատվության համակարգում և դասակարգում :
2. Հավաքագրված և համակարգված տեղեկությունների և տվյալների ստուգում, հավաստում և տրիանգուլիացիա:
3. Տվյալների վերլուծություն և ամփոփում:

Իրականացված վերլուծության և ամփոփումների հիման վրա նախատեսվում է պատրաստել ԳՉՄՌ-ների բաղկացուցիչ մաս հանդիսացող 3 հիմնական հաշվետվություններ.

- 1) Մարզերի ընդհանուր գյուղատնտեսական նկարագրերը (արդեն ներկայացվել են, մաս I):
- 2) Մարզերի ԳՉՄՌ-ների հիմնական ուղղությունները՝ սույն փաստաթուղթը:
- 3) Մարզերի ԳՉՄՌ-ների իրականացման գործողությունների ծրագրերը:

Սույն փաստաթղթում հաջորդիվ ներկայացնում ենք երկրորդ հիմնական հաշվետվությունը:

2 ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՇԱՄՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

2.1.1 Գյուղատնտեսության ընդհանուր խնդիրներ

ՀՀ Լոռու մարզում գյուղատնտեսության զարգացման հիմնական խոչընդոտների բացահայտումը, վերլուծումն ու դասակարգումն իրականացվել է մասնակցային եղանակով, Մարզային Աշխատանքային Խմբի ընդլայնված և համալրված կազմով, մի քանի խորհրդակցությունների և աշխատաժողովների իրականացմամբ: Արդյունքում բացահայտվել և սահմանվել են Լոռու մարզում գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հետևյալ հիմնական խնդիրները.

- 1. Ոռոգման համակարգի վատ վիճակը և սխալ/անարդյունավետ կառավարումը:** Խնդիրը շարունակվում է նաև զգալի թվով գյուղացիական տնտեսությունների համար ոռոգման ջրի հասանելիության անբավարարությամբ: Ոռոգման ներտնտեսային ցանցը ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ինչը հանգեցնում է ջրային ռեսուրսների կորստի:
- 2. Արդյունավետ ներդրանքների՝ պարարտանյութերի, վնասատուների դեմ պայքարի միջոցների և հատկապես բարձրակարգ սերմերի անբավարարությունն ու անմատչելիությունը:**
- 3. Գյուղատնտեսական տեխնիկայի, մեխանիզացիայի և սարքավորումների հնությունը, խիստ մաշվածությունը:** Սույն խնդիրը սահմանվել է նաև որպես գյուղատնտեսական աշխատանքների (ցանքի, մշակման և կուլտիվացիայի, բերքահավաքի, կթի և այլն) իրականացման ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների անբավարարություն: Այս խնդիրն ուղղակի բացասական ազդեցություն է գործում մշակության արդյունքների՝ հիմնականում բերքատվության և բերքի որակի (արտաքին տեսք) ցուցանիշի վրա: Անասնաբուժության (տավարաբուժության) ոլորտում համապատասխան կթի սարքավորումների անհասանելիությունը դժվարեցնում է կաթի արտադրության գործընթացը՝ երբեմն հանգեցնելով հում կաթի որակի անկման:
- 4. Ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաների անբավարար կիրառությունը:** Տիպիկ օրինակներ են՝ կաթիլային և անձրևացման եղանակով ոռոգումը, հակակարկտային ցանցերի և համակարգերի, այլընտրանքային և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը, բարձր արդյունավետ ներդրանքների (inputs) կիրառությունը և այլն, որոնք սահմանափակ կիրառություն ունեն մարզում:
- 5. Արտադրանքի պահեստավորման (ներառյալ սառնարանային պահեստների) և փաթեթավորման ենթակառուցվածքների անբավարարությունն ու բացակայությունը:** Բազմաթիվ գյուղացիական տնտեսությունների համար այս խնդիրը բնորոշվում է մեծածավալ մթերումների և վերամշակման կարողությունների բացակայությամբ, առկա պահեստային ենթակառուցվածքներում արտադրանքի պահպանման ոչ պատշաճ գործառնություններով և պայմաններով, շուկա հանելու պարագայում արտադրանքի արտաքին տեսքի ոչ բավարար մակարդակով: Այս հանգամանքը ևս իր ուղղակի բացասական ազդեցությունն է թողնում արտադրանքի որակի, իրացումների ծավալի և գնի, հետևաբար նաև ֆերմերային տնտեսությունների եկամտաբերության վրա:
- 6. Գյուղատնտեսական գործունեության կառավարման և արտադրանքի շուկայավարման գիտելիքի, փորձի և հմտությունների անբավարարություն և բացակայություն:** Այս հիմնական խնդրից է բխում նաև գյուղացիական տնտեսություններում գործունեության ռազմավարական-հեռահար և տակտիկական-միջնաժամկետ պլանավորման գրեթե իսպառ բացակայությունը: Չնայած բազմաթիվ զարգացման նախաձեռնությունների ներքո իրականացվող կրթական ծրագրերին, սույն խնդիրը շարունակում է արդիական մնալ: Մարզում չկա բավարար քանակի որակյալ մասնագետներ և աշխատուժ, բավական սահմանափակ է գյուղատնտեսության ոլորտի նորարարությունների և կայուն/կանաչ գործելակերպերի վերաբերյալ տեղեկատվությունը:

7. **Գյուղատնտեսական գործունեության վարման ոչ գործարար մոտեցումները:**
Գործողությունները հիմնված չեն շուկայի և պահանջարկի ուսումնասիրության վրա, գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում և կատարում (ծախսերի և եկամուտների) պատշաճ հաշվարկներ, չեն կատարում և պահում գրանցումներ և այլն: Գերակշիռ մեծամասնության մոտ խստաբացակայում են արտադրանքի իրացման կարողությունները, ֆերմերները չեն տիրապետում ներքին և արտաքին շուկայի զարգացումներին և պահանջարկի տատանումներին:
8. **Բարձրարժեք մշակաբույսերի մշակության վերաբերյալ տեղեկատվության, գիտելիքի, փորձի և հմտությունների անբավարարությունը, ինչի հետևանքով փոքր են մշակության ծավալները:** Այս խնդիրը խոչընդոտում և սահմանափակում է գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացումը, գյուղարտադրանքի վրա ավելացված արժեքի հավելումը և արտահանման բազմազանությունը:
9. Այլ խնդիրների շարքում հիշատակվել են նաև **արոտավայրերի դեգրադացիան և դրանց ոչ պատշաճ կառավարումը**, ինչը խնդիրներ է առաջացնում նաև անասնաբուծության ենթադրոտում, **հողերի մասնատվածությունը, ֆինանսական միջոցների և զարգացման նախաձեռնությունների սղությունը կամ անհասանելիությունը, պետություն-մասնավոր համագործակցության և ֆերմերային տնտեսությունների կոնսոլիդացիայի ցածր մակարդակը, ժամանակակից լաբորատոր կարողությունների բացակայությունը և այլն:**

2.1.2 Կերարտադրության հիմնախնդիրը և լուծման հնարավոր սցենարը

Սույն ռազմավարության մշակման քննարկումների ընթացքում, որպես մարզի համար կարևոր խնդիր, առանձնացվել էր կերարտադրությունը: Կերարտադրությունը կարևոր նշանակություն ունի Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման: Այն գյուղատնտեսական արտադրության ճյուղ է, որը զբաղվում է կոպիտ, հյութալի, խտացրած և արոտային կերերի արտադրությամբ՝ ապահովելով անասնաբուծության պահանջարկը:

Մարզում առկա է պոտենցիալ հնարավորություններ կերարտադրությունը զարգացնելու համար, քանի որ կան համապատասխան ռեսուրսներ: Դրանք են՝ չօգտագործված վարելահողերը (առկա է 42 001 հա, օգտագործվում է 21 355 հեկտարը), չօգտագործված խոտհարքները (առկա է 35 070 հա, օգտագործվում է 32 938 հեկտարը), չօգտագործված արոտավայրերը (առկա է 145 618 հա, օգտագործվում է 39 450 հեկտարը): Խոտհարքներում և արոտավայրերում ձևավորվող արոտականաչի և խոտի պաշարներով ապահովվում են գյուղատնտեսական կենդանիների ամառային կերերի պահանջի բավարարումն ու ձմեռային մուրային ժամանակահատվածի կոպիտ ծավալային կերի՝ խոտի պահանջարկի բավարարման ավելի քան 65-70%-ը:

Կերերի արտադրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է օգտագործել վերոնշյալ չօգտագործվող գյուղատնտեսական ռեսուրսները և խթանել կերարտադրության հիմնական աղբյուրները: Դրանք են.

1. Դաշտային կերարտադրություն, այդ թվում՝

- բազմամյա և միամյա խոտերի արտադրություն
- հատիկակերային և հատիկաընդեղենային կուլտուրաների արտադրություն
- սիլոսային մշակաբույսերի արտադրություն
- բոստանային կերային մշակաբույսերի արտադրություն
- արմատապտուղների արտադրություն

2. Արոտամարգագետնային կերարտադրություն

- արոտավայրերի ռացիոնալ օգտագործում
- խոտհարքների օգտագործում

Անհրաժեշտ է կազմակերպել կազմալուծված բնական կերային հանդակների (խոտհարքների և արոտավայրերի) վերականգնման և բարելավման միջոցառումների մշակումը (հիմք ընդունելով գիտական հիմնավոր մոտեցումները) և իրականացումը:

Կարևոր նշանակություն ունի նաև մարզում հիդրոպոնիկ եղանակով կանաչ զանգվածի արտադրության հիմնումն ու զարգացումը: Այն հնարավորություն կստեղծի ստանալ ցածր ինքնարժեքով և վիտամիններով հարուստ հյութալի կեր: Հիդրոպոնիկան հանքային սնուցիչների լուծույթով, միայն ջրով, առանց հողային հիմքի, բույսերի աճեցման մեթոդ է:

Ներկայումս (հիմնականում) կենդանուն որպես կանոն կերակրում են չոր կերով՝ խոտ և խտացված կեր, որոնց ինքնարժեքը շատ ավելի բարձր է, քան հիդրոպոնիկ եղանակով ստացված կանաչ զանգվածինը: Հիդրոպոնիկ եղանակով կանաչ զանգվածի արտադրությունը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել կերակրման ծախսերը և առավելագույնի հասցնել մսի և կաթի արտադրության արդյունքը:

2.1.3 Կայուն / կանաչ գյուղատնտեսության վարման խնդիրներ

ՀՀ Լոռու մարզում կայուն/կանաչ գյուղատնտեսական գործունեության իրականացման խնդիրներն ու խոչընդոտները մեծապես համընկնում են ընդհանուր գյուղատնտեսության զարգացման խնդիրների հետ: Կայուն / կանաչ գյուղատնտեսական գործունեության վարման խոչընդոտների թվում սահմանվել են հետևյալ կարևորները.

- 1. Ժամանակակից, նորարարական, գիտելիքահեն գյուղատնտեսական տեխնոլոգիաների կիրառության ցածր մակարդակը** (ոռոգման, պարարտացման, վնասատուների դեմ պայքարի, ցանքաշրջանառության, վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման և այլ հարցերի վերաբերյալ):
- 2. Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի, մեխանիզացիայի, սարքավորումների և ենթակառուցվածքների ոչ բավարար մակարդակի, ինչպես նաև առկա մեխանիզացիայի հնության և խիստ մաշվածության պատճառով վարելահողերի անբավարար մշակություն:** Կայուն և կանաչ մշակության հիմնադրույթներին հակասող ծանր տրակտորային մեխանիզացիայի կիրառությունը հողերի հերկի ժամանակ:
- 3. Բնական ռեսուրսների չհամակարգված օգտագործում, արոտավայրերի ոչ պատշաճ կառավարում,** որոնք հանգեցնում են արոտավայրերի դեգրադացման, Էական վնաս են հասցնում մարզի կենսաբազմազանությանը և առաջացնում են բուսատեսակների և կեցավայրերի պաշտպանության անհրաժեշտություն:
- 4. Կանաչ/կայուն գյուղատնտեսական գործելակերպերի վերաբերյալ գիտելիքի պակաս:** Այս խնդիրն արտահայտված է ինչպես կրթական մակարդակում՝ դպրոցներում և քոլեջներում համապատասխան կրթական ծրագրերի բացակայության կամ սահմանափակության պատճառով, այնպես էլ ոլորտի համար պատասխանատու մարմիններում:
- 5. Կանաչ գյուղատնտեսության տեսլականի, մոտեցումների և հետևաբար պետական աջակցության գործիքակազմի բացակայություն:** Այսօր գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության գործիքակազմը չի խթանում կանաչ/կայուն գյուղատնտեսության վարման գործելակերպերի անցումը ֆերմերային տնտեսություններում: Դա պայմանավորված է նաև այդ մոտեցումների և գործելակերպերի վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվության և պահանջների առկայությամբ՝ իրավական մակարդակում: Ոչ բավարար մակարդակի է նաև կանաչ/կայուն գյուղատնտեսությունը խթանելու և ջատագովելու նպատակով առկա մասնագիտական ռեսուրսների (այդ թվում ասոցիացիաների, միությունների և այլն աշխատանքի) համախմբումը:

2.2 ԿԱՅՈՒՆ / ԿԱՆՉ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՀԱՐԹԱՅԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Թեև առկա են գյուղատնտեսության, հատկապես կանաչ/կայուն գյուղատնտեսության, զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հանգամանքները, այդ զարգացումն այլընտրանք չունի: Գյուղատնտեսության ոլորտը հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի (ինչպես ամբողջ Հայաստանի) կայուն զարգացման ռազմավարական ոլորտներից մեկը: Անհրաժեշտ բոլոր ռեսուրսները պետք է ներդրվեն և միջոցառումները պետք է ձեռնարկվեն այդ զարգացումն ապահովելու համար: Ներկա պահին, ռազմավարական զարգացման խոչընդոտները (և՛ ընդհանրական բնույթի, և՛ կայուն/կանաչ գյուղատնտեսությանը վերաբերող) հաղթահարելու հիմնական ուղիները կարելի է սահմանել առկա խնդիրների հայելային լուծման գործողությունների իրականացման միջոցով: Մասնավորապես, առաջարկվում են հետևյալ ընդհանրական գործողությունները¹.

1. Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների նորացում/թարմացում և հասանելիության ապահովում: Մասնավորապես՝ գյուղատնտեսական տեխնիկայի պարկի համալրում բարձր-արդյունավետություն ունեցող ժամանակակից տեխնիկայով, նոր տեխնիկա, մեխանիզացիա, սարքավորումներ ձեռք բերելու և ենթակառուցվածքներ (այդ թվում գյուղատնտեսական տեխնիկայի տարածաշրջանային պարկեր) ձևավորելու ֆինանսական գործիքների մատչելիության բարձրացում և նոր գործիքների ներկայացում, նոր մատակարարների և դերակատարների ներգրավում և այլն: Կայուն գյուղատնտեսության վարման տեսանկյունից գյուղատնտեսական տեխնիկայի պարկի թարմացումը թույլ կտա նվազեցնել բերքի կորուստները (բերքահավաքի և բերքի տեղափոխման ընթացքում), ինչպես նաև ներդրանքների (սերմերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի) կորուստները բուն մշակության ընթացքում:
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, (ներառյալ անձրևաջրերի հավաքման և պահեստավորման գործելակերպերի ներդրում), նոր ջրավազանների կառուցում, ոռոգվող տարածքների ընդլայնում և ոռոգման համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում: Ժամանակակից արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների (կաթիլային և անձրևացման համակարգերի) լայնատարած կիրառություն:
3. Բարձրորակ սերմերի (հացահատիկի, կարտոֆիլի, հատիկընդեղենի) և տնկիների ձեռքբերման և/կամ արտադրության կազմակերպում և օգտագործման ինտենսիվացում՝ խթանման գործիքների կիրառմամբ:
4. Բարձրաժեռ մշակաբույսերի մշակության տարածքների ընդլայնում (հաշվի առնելով մարզի բնակլիմայական պայմանները և շուկայի պահանջարկը, տրամադրելով անհրաժեշտ գիտելիք և տեղեկատվություն), անցում փորձնական դաշտերից հիմնական արտադրության:
5. Վնասատուների ինտեգրված կառավարման (ՎԻԿ) ու այլընտրանքային մոնտեցումների կամ մեթոդների, ինչպիսիք են՝ թունաքիմիկատների ոչ քիմիական այլընտրանքները, օգտագործման խրախուսում, անվտանգ և արդյունավետ պարարտանյութերի կիրառման ընդլայնում՝ դրանց հետագծելիության ներդրմամբ և կիրարկմամբ:
6. Հետբերքահավաքային ենթակառուցվածքների՝ նոր ընդհանուր և ժամանակակից պահեստների (այդ թվում սառարանային), լոգիստիկ կենտրոնների կառուցում, առկա ենթակառուցվածքների վերականգնում և վերագինում, վերամշակման և մթերման կարողությունների ընդլայնման խրախուսում և զարգացում՝ մենդամթերքի անվտանգության նորմերի և պահանջների պահպանմամբ:
7. Ժամանակակից, նորարարական և գիտելիքահեն գյուղատնտեսական տեխնոլոգիաների և գործելակերպերի, այդ թվում հակակարկտային համակարգերի (հակակարկտային կայանների տեղակայում, կարկտապաշտպան ցանցերի տեղադրում և այլն), ոռոգման համակարգերի, վերականգնվող էներգիայի կիրառման ընդլայնում, Էկոլոգիապես ինտենսիվ գյուղատնտեսության խրախուսում (Ecologically intensive agriculture):

¹ Առաջարկվող գործողությունների գերակայությունները որոշակիորեն տարբերվում են սահմանված խնդիրների կարևորության գերակայություններից: Հաշվի են առնվել տարբեր խնդիրների լուծելիության հնարավորությունները:

8. Դեգրադացված հողերի վերականգնում, մեյիորացում և հարթեցում, հողում առկա սննդանյութերի կառավարումը՝ հողերի կայուն կառավարման մեթոդների կիրառությամբ:
9. Բարձր արտադրողական տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ներմուծում, վերարտադրություն, կենդանիների գլխաքանակի տոհմային հատկանիշների (նաև արտադրողականության) անհապաղ և կտրուկ բարելավում, կենդանիների պահվածքի պայմանների բարելավում:
10. Վնասակերների արտադրության ինտենսիվացում՝ նոր տեսակների արտադրության ներդրում, արտադրության ծավալների կտրուկ ավելացում: Արտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացում՝ կառավարման կայուն գործելակերպի ներդրմամբ և տարածմամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կենսաբազմազանության պահպանման խնդիրներին:
11. Կանաչ/կայուն գյուղատնտեսության վարման գիտելիքի ներկայացում և տարածում, գյուղատնտեսության վարման գործարար մոտեցումների և համապատասխան խորհրդատվական համակարգի ներդրում, ինչը կնպաստի կայուն գյուղատնտեսական գործելակերպերի ներդրմանը, ընդլայնմանը և խրախուսմանը՝ հիմնված ցուցադրական տնտեսություններում ներկայացված հաջողության դեպքերի փորձի տարածման վրա: Իրենց հերթին՝ այդ հաջողության դեպքերը ուղղակիորեն պայմանավորված են գերազանցության, խորհրդատվական և մասնագիտական կրթական ցուցադրական կենտրոնների կենտրոնների գիտելիքահեն գործունեության վրա:

2.3 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համաձայն «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. Չարգացման ռազմավարության»՝ մարզի զարգացման տեսլականն է **ուներևալ բազմաճյուղ զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն**²: Գյուղատնտեսության ոլորտում ՀՀ Լոռու մարզի զարգացման հիմնական գերակայությունը սահմանված է որպես **ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում**: Սույն գերակայության սահմանումը 2017թ. հիմնված է եղել այն ակնկալիքների վրա, որ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը.

- կնպաստի մարզի գյուղատնտեսության արդիականացմանը, առաջավոր տեխնոլոգիաների և բարձր արտադրողական ժամանակակից մեքենասարքավորումների կիրառմանը,
- բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածության, ջերմոցային տնտեսությունների և գյուղմթերքների պահպանման ժամանակակից սառնարանային տնտեսությունների քանակի ավելացմանը
- արդյունքում արդյունավետ կօգտագործվեն մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, կզարգանա ինտենսիվ այգեգործությունը՝ հատկապես Թումանյանի տարածաշրջանում:

2017-2025թթ. ռազմավարական փաստաթղթով սահմանված և վերը ներկայացված զարգացման տեսլականը և գերակայությունը մնում են անփոփոխ սույն փաստաթղթի համատեքստում: Միաժամանակ, իրականացված մեծածավալ մասնակցային աշխատանքի արդյունքում հնարավոր է դարձել ավելի մանրամասնել և լրացնել ՀՀ Լոռու մարզի զարգացման ռազմավարության գյուղատնտեսության բաժինը:

Դրա հիման վրա. 2022-2025 թվականների համար ՀՀ Լոռու մարզում գյուղատնտեսության զարգացման տեսլական է առաջարկվում հետևյալը՝ **«Ապահովել բարձրարժեք և մրցակցային գյուղատնտեսության ոլորտի կայուն և դիվերսիֆիկացված զարգացումը՝**

² Սույն բաժնի առաջին պարագրաֆն ամբողջությամբ քաղվածք է «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. Չարգացման ռազմավարությունից», էջ 40

Ժամանակակից և նորարարական գործելակերպերի և տեխնոլոգիաների կիրառմամբ»: Տեսլականն իրագործելու ճանապարհին նախատեսվում է հասնել հետևյալ միջանկյալ նպատակներին.

1. Կայուն/կանաչ գյուղատնտեսության զարգացում՝ առաջատար, աշխատասեր, տեղեկացված և կրթված ֆերմերների հետ երկարաժամկետ համագործակցության հաստատման և (արտաքին) ներդրումների ներգրավման միջոցով:
2. Արդյունաբերական գյուղատնտեսության զարգացում հողերի կոնսոլիդացման, դրանց արդյունավետ օգտագործման և ժամանակակից, նորարարական ու առաջավոր գյուղատնտեսական տեխնիկայի, մեխանիզացիայի և սարքավորումների պարկերի համակարգի և ենթակառուցվածքների (սառնարանային պահեստ, վերամշակման և փաթեթավորման կարողություններ) ստեղծման, ժամանակակից ոլորտային լաբորատոր կարողությունների ձևավորման միջոցով:
3. Գյուղատնտեսության զարգացման պետական հասցեական օժանդակության (այդ թվում կայուն գյուղատնտեսության վարման ժամանակակից գործելակերպերի վերաբերյալ խորհրդատվության) համակարգում և արդյունավետության բարձրացում, մարզի համար հատուկ ծրագրերի մշակում և նախաձեռնում:
4. Կայուն/կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի (agricultural practice) ներդրում և առավելագույն տարածում, հիմնված գյուղացիական տնտեսությունների ավանդական գործողությունների փորձի, դրա կտրուկ բարելավման վրա: Հաջողված փորձի զանգվածային կրկնօրինակում:

Միջնաժամկետ հատվածում սահմանված նպատակներին, իսկ հեռահար հորիզոնում զարգացման տեսլականին հասնելու համար ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության ոլորտում առկա են հետևյալ ռեսուրսներն ու նախադրյալները.

- Գերակա և ավանդաբար զարգացած ենթաոլորտներում (հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի, բարձրարժեք ոչ-ավանդական բանջարեղենի մշակության, տավարաբուծության և այլն) հետագա զարգացման մեծ ներուժը, փորձառու, կրթված և զարգացման ցանկություն ունեցող մարդկային ռեսուրսների առկայությունը, կուտակված գիտելիքն ու փորձը, ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնաճյուղի առկայությունը
- Հիմնական արտադրատեսակների մեծ պահանջարկը տեղական և արտաքին շուկաներում, ներմուծման փոխարինման ներուժը և արտահանման ընդլայնման հնարավորությունը:
- Կայուն / կանաչ տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսական ծրագրերի հաջող իրականացման բազմաթիվ օրինակներ մարզում:
- Բերրի հողային ռեսուրսների առկայություն, որոնց վրա հնարավոր է կազմակերպել համեմատաբար մեծամասշտաբ, արդյունաբերական մշակություն:
- Կլիմայի փոփոխության և ջերմաստիճանի բարձրացման պայմաններում ինտենսիվ այգիների ստեղծման նախադրյալներ:
- Գյուղատնտեսության դիվերսիֆիկացման լավ հնարավորություններ, ցածր բերքատու տեսակները բարձրարժեք նոր մշակաբույսերով փոխարինելու առկա փորձ և հնարավորություն:
- Ջրային ռեսուրսների առկայություն, ոռոգման համակարգերի արդիականացման և ժամանակակից տեխնոլոգիաների (կաթիլային և անձրևացման համակարգերի) ներդրման հնարավորություն:
- Ժամանակակից առաջադեմ կոնստրուկցիոն լուծումներով և վերականգնվող էներգիայի կիրառմամբ գյուղատնտեսության վարման (այդ թվում ջերմոցային տնտեսությունների հիմնման) նախադրյալներ:
- Մեծածավալ արոտավայրերի (այդ թվում չմշակվող վարելահողերի) առկայությունը, դրանց օգտագործման անբավարար մակարդակը, արոտավայրերի պատշաճ կառավարման պարագայում, լավ հնարավորություն են ստեղծում տավարաբուծության և դրա հարակից ենթաոլորտների զարգացման համար: Միաժամանակ, կայուն գյուղատնտեսության

պահանջներից ելնելով՝ կենդանիների գերարածեցում որևէ տարածքում չի կարելի թույլ տալ:

- Անասնապահության և մասնավորապես տավարաբուծության կուտակված զգալի փորձ, մեծ քանակությամբ գոմաղբի առկայություն, ինչը հողերի ոչ քիմիական նյութերով պարարտացման լավ հնարավորություն է ընձեռում (պահպանելով իհարկե կանաչ գյուղատնտեսության վարման գործելակերպերը):

2.4 ԿԱՅՈՒՆ / ԿԱՆԱԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

2.4.1 Բրազիլիայի օրինակը

Բրազիլիան ունի աշխարհի ամենամեծ ագրո-բնապահականական ակտիվները: Ագրոբիզնեսը համարվում է երկրի տնտեսության շարժիչ ուժը և 2018թ. ապահովել է արտահանման 42.4%-ը 101.2 միլիարդ ԱՄՆ դոլար արժեքով: Գյուղատնտեսության ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով երկիրը մշակել է կայուն արևադարձային գյուղատնտեսության մոդել, որն ընդլայնել է արտադրությունը արդյունավետության բարձրացման միջոցով: Այս արդյունավետությունը նշանակում է, որ Բրազիլիան կարողացել է պահպանել իր հայրենի բուսականությունը տարածքի 66%-ում:

Կայուն գյուղատնտեսության վարման նպատակով Բրազիլիան մշակել է պահանջկոտ բնապահականական օրենսդրություն և ցածր ածխածնային գյուղատնտեսության հավակնոտ ծրագիր: Բրազիլիայի ցածր ածխածնային գյուղատնտեսության ծրագիրը (ABC ծրագիր) ցածր ածխածնային տեխնոլոգիաների ներդրման և կայուն սկզբունքներով գյուղատնտեսական արտադրության ավելացման կարևորագույն բաղադրիչն է:

Անտառի մասին օրենսգիրքը և Ցածր ածխածնային գյուղատնտեսության ծրագիրը նպաստել են գյուղատնտեսության ոլորտում կայուն գործելակերպերի ներդրման ջանքերին: Այս երկու փաստաթղթերն էլ խրախուսում են արտադրողականության և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Անտառի մասին օրենսգիրքը գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերից պահանջում է իրենց սեփական հողատարածքի որոշակի տոկոսային մաս սահմանել որպես անտառածածկ տարածք՝ ազգային նշանակության բուսականության մնացորդները պահպանելու և կենսաբազմազանությունը պաշտպանելու նպատակով: Այս տոկոսային մասը կարող է տատանվել 20-80%-ի սահմաններում՝ կախված բուսականության տեսակից և հողատարածքի աշխարհագրական դիրքից:

Ցածր ածխածնային գյուղատնտեսության ծրագիրը նախատեսում է վարկային միջոցների հատկացում այն գյուղատնտեսական նախաձեռնություններին, որոնք նախատեսում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում: ABC ծրագրի թիրախային ուղղություններն են.

- Արոտավայրերի վերականգնում,
- Ինտեգրված Բուսաբուծություն-Անասնաբուծություն-Անտառային և Ագրոանտառային համակարգեր,
- Անվար համակարգ,
- Ազոտի կենսաբանական ֆիքսում,
- Մշակովի կոմերցիոն անտառ,
- Կենդանական թափոնների մշակում,
- Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն:

Կայուն գյուղատնտեսության խրախուսման և գյուղատնտեսությունում արդյունավետության և արտադրողականության բարձրացման լավագույն փորձի և տեխնիկայի օրինակ է նաև կենսապարարտանյութերի և կենսաքիմիկատների օգտագործումը:

2.4.2 Մեծ Բրիտանիայի օրինակը

2021թ. հունվարի 1-ից Մեծ Բրիտանիան սկսել է գյուղատնտեսության անցումային շրջանը: Նոր նախաձեռնությամբ նախատեսվում է 2021-2027թթ. ընթացքում ֆինանսական աջակցությունն ուղղել ֆերմերային տնտեսություններին՝ նպատակ ունենալով բարելավել շրջակա միջավայրը, նպաստել կենդանիների առողջության պահպանմանը և նվազեցնել ածխածնի արտանետումները: Նախատեսվում է աջակցության երեք մակարդակ, որոնք ուղղված կլինեն կայուն գյուղատնտեսական գործելակերպերի ֆինանսավորմանը, բնության վերականգնման համար պայմանների ստեղծմանը և լանդշաֆտների փոփոխությունների իրականացմանը՝ օրինակ անտառային տարածքների կամ այլ էկոհամակարգերի ձևավորման միջոցով:

Ըստ այս բարեփոխումների, Մեծ Բրիտանիան նախատեսում է 2028թ. ունենալ.

- Նորացված գյուղատնտեսություն, որը կարտադրի առողջ սնունդ՝ երկրի ներսում և արտերկրում սպառման համար, իսկ գյուղացիական տնտեսությունները կլինեն շահութաբեր և տնտեսապես կայուն,
- Գյուղատնտեսությունը և գյուղական համայնքը էականորեն կնպաստեն բնապահպանական նպատակներին, ներառյալ կլիմայի փոփոխության հաղթահարմանը:

Ըստ այդմ, Մեծ Բրիտանիայի նպատակն է, որ 2028թ. ֆերմերները կարողանան.

- վարել կայուն բիզնես և չեն ապավինի պետական սուբսիդավորմանը,
- կառավարել իրենց բիզնեսն այնպես, որ ապահովվի սննդամթերքի շահութաբեր արտադրությունը և բնության վերականգնումը՝ միաձուլելով այսօր առկա լավագույն ժամանակակից տեխնոլոգիաները ֆերմերային տնտեսության վարման պատշաճ ավանդական գործելակերպերի հետ,
- օգտվել պետական միջոցներից, ինչը կօգնի նրանց ապահովել իրենց հողերում շրջակա միջավայրի պաշտպանությունը և կենդանիների բարեկեցության ապահովումը և կօգնի դարձնել իրենց բիզնեսն ավելի արդյունավետ և կայուն,
- համապատասխանել հստակ, համապատասխան և արդյունքների վրա հիմնված իրավական այնպիսի չափանիշներին, որոնք պաշտպանում են Միացյալ Թագավորության սննդամթերքը միջազգայնորեն, կանխում շրջակա միջավայրին հասցվելիք վնասը, պաշտպանում են կենսաանվտանգությունը և կենդանիների բարեկեցությունը:

2.4.3 ԵՄ Օրինակը

2.4.3.1 Ընդհանուր սկզբունքներ

Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունների միջազգային փորձը մանրամասն ուսումնասիրելով՝ սույն առաջադրանքի փորձագիտական թիմը որոշում է ընդունել առաջարկել առաջնորդվել Եվրոպական Հանձնաժողովի 2019-2024թթ. սահմանած 6 առաջնահերթություններից առաջինի՝ «Եվրոպական Կանաչ Գործարքի» (ԵԿԳ) (“European Green Deal”) դրույթներով և սկզբունքներով³: Այս սկզբունքի համաձայն՝ Եվրոպան նախատեսում է դառնալ աշխարհում առաջին կլիմայապես չեզոք մայրցամաքը՝ ժամանակակից և ռեսուրսաարդյունավետ տնտեսությամբ: ԵԿԳ-ն նախատեսում է բարելավել մարդկանց և սերունդների ապրելակերպը, կենսամակարդակն ու առողջությունը՝ ապահովելով թարմ օդ, մաքուր ջուր, առողջ հող և կենսաբազմազանություն, Էներգախնայող և արդյունավետ կեցավայր, առողջ և մատչելի սնունդ, և այլն: Այս սկզբունքը կյանքի կոչելու համար մշակվել և առաջարկվել է բազմակողմանի գործելակերպ՝ ներառյալ գյուղատնտեսության զարգացման գործողությունների խումբը: Այս գործողությունների խումբը

³ Տե՛ս https://ec.europa.eu/info/strategy/priorities-2019-2024_en

իովին համահունչ է այսպես կոչված «Գյուղատնտեսական Համընդհանուր Քաղաքականության» (ԳՀՔ) («Common agricultural Policy»)⁴ պահանջներին:

2.4.3.2 ԳՀՔ հատուկ նպատակները

ԳՀՔ հատուկ նպատակները չորսն են.

- Նպաստել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը և հարմարվողականությանը, ինչպես նաև կայուն էներգիայի արտադրությանը,
- Խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը և բնական ռեսուրսների՝ ջրի, օդի և հողի արդյունավետ կառավարումը,
- Նպաստել կենսաբազմազանության պահպանմանը, զարգացնել Էկոհամակարգային ծառայությունները, պաշտպանել բնական կեցավայրերը և բնական լանդշաֆտները,
- Բարելավել գյուղատնտեսական կենդանիների պահվածքի պայմանները և կենսակերպը, բարելավել հակամանրէային դիմացկունությունը:

ԳՀՔ շրջանակներում հատուկ նպատակներին հասնելու նպատակով ռազմավարական զարգացման ծրագրերի համար սահմանված գերակա խնդիրները հետևյալն են.

- ա) Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում, ներառյալ գյուղատնտեսական գործունեության արդյունքում ջերմոցային և ածխաթթու գազերի արտանետումների կրճատումը:
- բ) Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականություն, ներառյալ սննդամթերքի արտադրության ոլորտի դիմակայունության ապահովումը, բույսերի և կենդանիների տեսակների բազմազանությունը, սրանց դիմացկունությունը հիվանդությունների և կլիմայի փոփոխության նկատմամբ:
- գ) Ջրի որակի պաշտպանություն և բարելավում, ինչպես նաև ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության նվազեցում:
- դ) Պայքար հողի դեգրադացման դեմ, հողերի վերականգնում, բերրիության բարելավում, և սննդանյութերի կառավարում:
- ե) Կենսաբազմազանության պաշտպանություն՝ տեսակների և կեցավայրերի պաշտպանություն, լանդշաֆտների ստեղծում և վերականգնում:
- զ) Թունաքիմիկատների (հատկապես մարդկանց և բնության համար վտանգավոր նյութերի) օգտագործման սահմանափակում:
- է) Գյուղատնտեսական և վայրի կենդանիների կեցության պայմանների բարելավում:

2.4.3.3 Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման գործիքակազմը

Կայուն / կանաչ գյուղատնտեսության ռազմավարական զարգացման գործողությունների խմբի հիմնական ցանկը մշակվել է նախորդ բաժնում սահմանված գերակա խնդիրներին անդրադառնալու և դրանց լուծման ուղղությամբ կոնկրետ քայլեր իրականացնելու համար: Ստորև ներկայացված բոլոր գործողությունները կարող են վերաբերվել նաև սույն ռազմավարության իրականացման արդյունավետ քաղաքականությանը և միջոցառումներին: Առաջարկվող գործողություններն են.

1. **Օրգանական գյուղատնտեսական գործելակերպեր**, ներառյալ՝
 - Անցում ավանդական գյուղատնտեսությունից օրգանականին,
 - Օրգանական գյուղատնտեսության պահպանում:

2. **Վնասատուների ինտեգրված կառավարման գործելակերպեր**, ներառյալ՝

⁴ «Common Agricultural Policy», տե՛ս https://ec.europa.eu/info/food-farming-fisheries/key-policies/common-agricultural-policy_en

- Կառավարման հատուկ գործառնություններով և թունաքիմիկատների գրոյական կիրառմամբ բուժֆերային գոտիների ստեղծում,
- Մոլախոտների մեխանիկական հսկում,
- Դիմակայուն, վնասատուների դեմ դիմացկուն մշակաբույսերի սորտերի և տեսակների մշակություն,
- Կենսաբազմազանության պահպանության նպատակով հողերի մշակության մասնակի սահմանափակում:

3. Ագրոէկոլոգիական միջոցառումների իրականացում, ներառյալ՝

- Ցանքաշրջանառություններ,
- Բույսերի և տեսակների խառը մշակություն,
- Այգիներում ծառերի և/կամ հիմնական մշակաբույսերի միջշարային ցանքեր,
- Հողերի նվազագույն մշակության և սննդային տարրերի վերականգնման նպատակով միջ-ձմեռային մշակության սահմանափակում,
- Կենդանիների թույլ ինտենսիվությամբ արածեցում,
- Կլիմայի փոփոխությանը դիմակայուն մշակաբույսերի տեսակների կիրառություն,
- Խոտհարքներում և այլ հողատեսքերում կենսաբազմազանության պահպանության (բույսերի փոշոտման, բույսերի և կենդանիների կերակրման) նպատակով մշակաբույսերի խառը սորտերի և տեսակների մշակություն,
- Օրգանական գյուղատնտեսական գործելակերպերի և ստանդարտների կիրառում:

4. Կենդանիների պահվածքի պայմանների բարելավում, ներառյալ՝

- Կենդանիների կերակրման օպտիմալացում, սննդի և ջրի հասանելիության բարձրացում,
- Կենդանիների կեցավայրերի (գոմային) պայմանների բարելավում՝ տարածքների ընդարձակում, հատակների՝ կանգնելու և պառկելու տեղերի ծղոտով ծածկում, առանց կապի պահվածք, բարձր առաստաղ, պատշաճ օդափոխություն և լուսավորություն և այլն,
- Օրգանական գյուղատնտեսությամբ նախատեսված ստանդարտների և գործելակերպերի կիրառում,
- Կենդանիների տոհմային հատկանիշների, արտադրողականության ցուցանիշների, գենետիկ բազմազանության բարելավման, առողջության պահպանման և հիվանդությունների դեմ պայքարի գործողություններ, գոմաղբի քանակի նվազեցում,
- Արոտների կայուն կառավարում, արածեցման ժամանակահատվածի երկարեցում, արոտների հասանելիության բարելավում,
- Կենդանիների համար բացօթյա տարածքների հասանելիության բարելավում:

5. Ագրոանտառային տնտեսության զարգացում,

- Կենսաբազմազանության պահպանմանը և ընդլայնմանն ուղղված քայլեր
- Լանդշաֆտի առանձնահատկությունների և վայրի կենդանիների համար «միջանցքների» ստեղծում և պահպանում
- Բարձր կենսաբազմազանությամբ (բազմաթիվ տարբեր տեսակի օրգանիզմներ և բուսատեսակներ) անտառաարոտային համակարգերի ստեղծում և պահպանում:

6. Բարձր բնական արժեք ապահովող գյուղատնտեսություն, ներառյալ՝

- Կենսաբազմազանության պահպանությանը նպաստող բուսածածկույթի ապահովում,
- Այգիներում և վարելահողերում մշակաբույսերի և ծառերի միջշարային տարածքներում արածեցման կազմակերպում,
- Կենդանիների և բույսերի համար մասնակի - բնական կեցավայրի ստեղծում և պահպանում,
- Պարարտանյութերի օգտագործման կրճատում, վարելահողերի ինտենսիվ օգտագործման կառավարում:

7. Ածխածնային հողագործություն, ներառյալ՝

- Ռեսուրսախնայող գյուղատնտեսություն,
- Ջրային հողատեսքերի վերականգնում,
- Գյուղատնտեսական թափոնների կայուն կառավարում,
- Խոտհարքների հիմնում և կայուն կառավարում, և այլն:

8. Ճշգրիտ գյուղատնտեսություն, ներառյալ՝

- Սննդանյութերի կառավարում, կորստի նվազեցում և բացառում, շրջանաձև տնտեսվարում,
- Գյուղատնտեսական ներդրանքների՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, ոռոգման օգտագործման ճշգրիտ և կայուն կառավարում:

9. Հողում առկա սննդանյութերի կայուն կառավարում, ջրային ռեսուրսների պաշտպանություն և պահպանում, այլ միջոցառումներ միտված հողերի վերականգնմանը և ջերմոցային գազի արտանետման նվազեցմանը:

2.4.4 Շվեյցարիայի օրինակը

Շվեյցարիան հետևողականորեն զարգացնում է օրգանիկ գյուղատնտեսությունը երկրում: 2000-2020թթ. օրգանիկ տնտեսությունների թիվն աճել է 54%-ով: Միայն 2020թ. այդ ցուցանիշն աճել է 3.8%-ով: Ներկայումս օրգանիկ գործունեությունն իրականացնող տնտեսությունները կազմում են ընդհանուր թվի 15.3%-ը, վերջին 20 տարիների ընթացքում զգալի աճելով 6.9% մակարդակից: 2000թ. երկրում գործում էին ընդամենը 4,902 օրգանիկ տնտեսություններ, մինչդեռ 2020թ. դրանց քանակը հասել է 7,561-ի: Հատկանշական է, որ այս աճն ու զարգացումները տեղի են ունենում Շվեյցարիայում գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի անկման ֆոնին: 2000 - 2020թթ. գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թիվը շվեյցարիայում նվազել է 70,537-ից 49,363-ի՝ մոտ 30%-ով:

Միաժամանակ, աճում են նաև օրգանական տնտեսությունների միջին չափերը: 2000թ., միջին օրգանական տնտեսությունը շվեյցարիայում տնօրինում էր մոտ 16.9 հա հողատարածք, իսկ 2020թ. այդ ցուցանիշն աճել է 23.5 հա՝ դառնալով մոտ 39%-ով ավելի մեծ: Շվեյցարական օրգանական տնտեսությունների 81%-ից ավելին տնօրինում են 10 հա և ավել, իսկ 50%-ից ավելին՝ 20 հա և ավել հողատարածք:

2021թ. հունիսի 13-ին շվեյցարացիներն ընդունել են վնասատուների դեմ պայքարի քիմիական դեղամիջոցների օգտագործումը կտրուկ օրենսդրական նախագծեր⁵: Այդ նախագծերի ընդունումն էլ ավելի կիսթանի օրգանական գյուղատնտեսության զարգացումը երկրում⁶:

2.4.5 Ավստրիայի օրինակը

Ավստրիացի սպառողների սպասումները, ինչպես նաև երկրի բնակլիմայական և տոպոգրաֆիկ պայմանները (որոնք զգալիորեն սահմանափակում են գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացման հնարավորությունները), մեծապես պայմանավորում են բնապահպանական տեսանկյունից անվտանգ գյուղատնտեսական տեխնոլոգիաների կիրառության հաջող առաջնորդումը երկրում: Գյուղատնտեսական քաղաքականության վարման նման կողմնորոշումը հետևանքն է քաղաքական որոշումների, որոնք երկրում ընդունվել են մինչև Ավստրիայի ԵՄ-ին միանալը: Արտադրողականության նպատակամղված խթանման և մշակվող տարածքների շարունակական ընդլայնման փոխարեն, Աբստրայի գյուղատնտեսական քաղաքականությունը 1980-ական թվականներին սահմանել է սննդի

⁵ Տե՛ս <https://lenews.ch/2021/05/07/latest-poll-shows-support-for-swiss-anti-pesticide-votes/>

⁶ Տե՛ս նաև՝ <https://www.fao.org/3/Y1669E/y1669e0e.htm> և [swiss-pesagriculturalpolicy.pdf \(cbd.int\)](https://www.fao.org/3/Y1669E/y1669e0e.htm)


բարձր որակի ապահովման առաջնահերթությունը քանակական զգալի աճ ապահովելու փոխարեն:

Որպես բնապահպանական տեսանկյունից անվտանգ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու հիմնական մեթոդ է ընդունվել օրգանական արտադրության կազմակերպումը: Ավստրիան համարվում է ԵՄ թիվ մեկ օրգանական երկիրը. առաջին օրգանական տնտեսությունն Ավստրիայում գրանցվել է 1927թ.: Բացի դա, Ավստրիան նաև առաջին երկիրն է աշխարհում, որը ներդրել է օրգանական գործունեության իրականացման կարգավորման համակարգ և դա արել է Եվրոպայում նմանատիպ կարգավորման համակարգի համընդհանուր ընդունումից ավելի քան 10 տարի առաջ: Ներկայումս Ավստրիայի գյուղացիական տնտեսությունների ավելի քան 16%-ը և գյուղատնտեսական հողատեսքերի մոտ 20%-ը ներգրավված են բնապահպանական տեսանկյունից անվտանգ գործունեություն իրականացնող օրգանական տնտեսություններում: Ընդունված գաղափարախոսության համատեքստում նպատակ է սահմանվել գյուղատնտեսական բարձր ստանդարտների կիրառության միջոցով պահպանել հողի, ջրի և օդի որակը գալիք սերունդների համար⁷:

2.4.6 Կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը անասնապահության ոլորտում

Կաթնատվության ցուցանիշի բարելավումը մեծապես է հետևյալ հիմնական գործոններով:

Նկար 1 - Կաթնատվության վրա ազդող գործոնները




Կաթնատվության վրա ազդող (աճի նպաստող կամ սահմանափակող) ամենակարևոր գործոնների թվում պետք է նշել հետևյալ մի քանիսը. ջուրը (որ կենդանիները խմում են), հավասարակշռված սնուցումը (կենդանիների բնութագրիչներին համապատասխանող),

անասնապահական տնտեսությունների կառավարումը (ներառյալ կենդանիների պահպանման և բուժության պայմանները), վերարտադրության և բուժման միջոցառումները (անասնաբուժական ծառայությունների մատուցումը), ինչպես նաև կենդանիների գենետիկ բնութագրիչների բարելավումն ու տոհմային գործը (օրինակ՝ արհեստական սերմնավորման կիրառությունը):

⁷ Տե՛ս նաև՝ <https://www.tasteofaustria.org/organic-country-no-1> և [Organic farming in Austria | The European Network for Rural Development \(ENRD\) \(europa.eu\)](http://www.organicfarming.eu)

Նկար 2 - Ազդեցության գործոնների և ջերմոցային գազերի արտանետումների կապը



ԽԵԿ բուծության գործունեության կայունությունը նեժապես պայմանավորված է պատշաճ գործելակերպի իրականացմամբ, ներառյալ ճիշտ ընտրված կերերի օգտագործմամբ և ժամանակին դրանց պահեստավորմամբ, կենդանիների առողջության պատշաճ պահպանությամբ և հիվանդությունների կանխարգելման մեխանիզմների ներդրմամբ, տոհմային գործի և կենդանիների գենետիկ հատկանիշների շարունակական բարելավմամբ: Ավելին՝ այս գործելակերպի ապահովումը թույլ է տալիս երկակի դրական ազդեցություն

ապահովել բարձրացնել կենդանիների կաթնատվությունն ու մսատվությունը և կրճատել մթնոլորտ արտանետվող ածխաթթու գազի քանակը՝ մեղմելով կլիմայի փոփոխության հետևանքները: Հաշվի առնելով որ տավարաբուծությունը ընտրվել է որպես մարզի գյուղատնտեսության զարգացման գերակայելի ոլորտներից մեկը, այս խնդիրների հաշվի առնելը ռազմավարական նշանակություն է ստացել:

Վերջին ժամանակահատվածում իրականացված հետազոտությունները եզրահանգում են, որ արտանետումների կառավարման համապատասխան քաղաքականության (պատժիչ և մոտիվացնող գործիքակազմի միաժամանակյա) կիրառումը թույլ է տվել աշխարհում զգալիորեն կրճատել զուտ արտանետումների ծավալը (մոտ 89%): Սա մեծապես ռելևանտ է երկրագնդի գլոբալ ջերմաստիճանի աճը մինչև 2°C⁸ մակարդակում պահելու գերագույն նպատակին:

Խեկ բուծության բնագավառում կլիմայի փոփոխության ռիսկերը մեղմելու հիմնական հնարավորությունների թվում հիշատակման են արժանի հետևյալները.

1. Արտադրողականության և արտադրության արդյունավետության խիստ հիմնավորված աճը ԽԵԿ բուծության ոլորտում, ինչը կարող է նպաստել ջերմոցային գազերի արտանետումների զգալի՝ մոտ 30% կրճատմանը, միաժամանակ նպաստելով արտադրողականության բարելավման միջոցով գյուղատնտեսական տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Արտադրողականության աճի գործոնները ներկայացված են վերևում: Գումաղբից մեթան գազի ստացումը իր հերթին է նվազեցնում մեթանի արտանետումները՝ մոտ 80%-ով:
2. Ածխաթթու գազի մթնոլորտում արդեն առկա քանակությունը կարող է կրճատվել հողերի արդյունավետ կառավարման և դեգրադացված տարածքների վերականգնման միջոցով: Սա անհրաժեշտ է առանց արտանետումների ծավալի աճին նպաստող գործողությունների:
3. ԽԵԿ և այլ կենդանիների բուծության գործելակերպի բարելավման (նաև կլիմայի փոփոխության ռիսկերը մեղմելու և չեզոքացնելու) համար անհրաժեշտ ֆինանսների հասանելիությունը եղել և մնում է գյուղացիական տնտեսությունների հիմնական խնդիրներից մեկը: Փոքր տնտեսավարողները սովորաբար դժվարանում են իրացվելի և ոչ

⁸ Տե՛ս "Opportunities for Climate Finance in the Livestock Sector", April 2021, WBG

ռիսկային ակտիվներ առաջարկել որպես գրավ, քան որ հիմնականում տիրապետում են ցածր իրացվելի անշարժ գույք և կենդանիներ: Ֆինանսական հաստատությունները նման գրավը ռիսկային են համարում և վարկի վերադարձը նրանց համար խնդրահարույց է դառնում: Այս իրավիճակում անհրաժեշտ է գտնել համապատասխան արդյունավետ լուծումներ և երկկողմանի ձեռնտու և ընդունելի ֆինանսավորման գործիքակազմ մշակել և ներդնել:

3 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅԵԼԻ ԵՆԹԱՈՒՐՏՆԵՐԸ

3.1 ԳԵՐԱԿԱՅԵԼԻ ԵՆԹԱՈՒՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Լոռու մարզում գյուղատնտեսության ռազմավարական զարգացման գերակա ճյուղերի ընտրության համար մշակվել է հետևյալ մոտեցումը.

1. Հիպոթեզ է առաջադրվել, որ ՀՀ Լոռու մարզում գյուղատնտեսության զարգացման հիմնական նպատակները (ավելի բնորոշիչ «գերակա» տերմինը չի կիրառվել, որպեսզի տարբերենք գերակա ենթաօլորտներից) պետք է ընդհանուր առմամբ համահունչ լինեն ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարության հիմնական նպատակներին:
2. Հիմնական նպատակների (չափորոշիչների) ցանկը համալրվել է 2-3 նոր դրույթներով⁹, հիմք ընդունելով գյուղատնտեսության ոլորտի կայուն / կանաչ զարգացման անհրաժեշտությունը, և գյուղատնտեսական ոլորտից անբաժանելի բնության պահպանության մարտահրավերը:
3. Հիշատակված հիմնական նպատակներին ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերի գյուղատնտեսության ոլորտի մասնագետների, գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող մասնագետների, գիտնականների երկու տասնյակից ավել փորձագիտական խմբի հետ իրականացված հատուկ անհատական քննարկումների հիման վրա տրվել են կարևորության կշիռներ:
4. ՀՀ Լոռու մարզի աշխատանքային խումբը գնահատել և դասակարգել է գյուղատնտեսության տարբեր ենթաօլորտներն ըստ գերակայությունների՝ հիմք ընդունելով վերը հիշատակված հիմնական նպատակները: Մարզային աշխատանքային խմբի գնահատականների գումարը կշռվել է ըստ փորձագիտական խմբի սահմանած կշիռների:
5. Այս բոլոր գործողությունների արդյունքում ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության ոլորտում սահմանվել են հետևյալ գերակա ենթաօլորտները.
 - Կարտոֆիլի մշակություն,
 - Հացահատիկի մշակություն,
 - Բանջարանոցային մշակաբույսերի մշակություն,
 - Մեղվաբուծություն
 - Անասնաբուծություն, հատկապես տավարաբուծություն (կաթի և մսի արտադրություն)¹⁰:
 - Հատապտուղների արտադրություն:

Սույն փաստաթղթի նախորդ գլուխներում սահմանված զարգացման խնդիրները և խոչընդոտները, դրանց լուծման հնարավոր ուղղությունները և առկա ռեսուրսները հավասարապես վերաբերում են նաև այդ գերակա ենթաօլորտներին:

⁹ Ընդհանուր առմամբ ընդունվել է գյուղատնտեսության ռազմավարական զարգացման 14 հիմնական նպատակ: Գերակա ոլորտների ընտրության գործիքը ներկայացվում է կից:

¹⁰ Թեև մարզում առկա է ոչխարաբուծության և այծաբուծության փորձ, այնուամենայնիվ այս գործելակերպը չի համարվում կայուն/կանաչ և խորհուրդ չի տրվում կիրառել մարզում: Ոչխարաբուծությունը հանգեցնում է ինչպես արտավայրերի դեգրադացիայի, այնպես էլ հողի աղակալման և անապատացման, հանդիսանում է ջերմոցային գազերի արտանետման խոշոր աղբյուրներից մեկը և կարող է Եական վնաս հասցնել շրջակա միջավայրին ու մարզի կենսաբազմազանությանը

4 ԿԱՅՈՒՆ / ԿԱՆԱՅ ԳՅՈՒԴԱՏՆԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ընդհանրապես, կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման գերագույն նպատակը սահմանվում է որպես գյուղատնտեսության վարման Էկոհամակարգային մոտեցում՝ միտված բնական ռեսուրսների պահպանությանը, կայուն օգտագործմանը և փոխանցմանը գալիք սերունդներին: Ռազմավարական մակարդակում այս գերագույն նպատակը միտված է բնակչության կտրուկ աճող թվաքանակի պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ քանակությամբ սննդի, անասնակերի, փայտանյութի և վառելիքի արտադրությանը, որը պետք է իրականացվի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների խստիվ պահպանությամբ և խնայողական օգտագործմամբ: Գյուղատնտեսական արտադրությունը պետք է հավասարակշռված լինի տնտեսական կենսունակության և ռեսուրսների կայուն օգտագործման հիմնական նպատակների միջև:

Մարզի գյուղատնտեսության զարգացման ռազմավարության համատեքստում կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման կոնկրետ նպատակը (specific objective) սահմանվել է հետևյալ դրույթների հիման վրա.

1. Իր Էությունը այն պետք է համահունչ լինի վերը ներկայացված միջազգայնորեն ընդունված սահմանումներին,
2. Գաղափարական առումով այն համահունչ է մարզի ընդհանուր զարգացման տեսլականին,
3. Փոխյրացման առումով այն համահունչ է մարզի գյուղատնտեսության զարգացման տեսլականին,
4. Օպերացիոն մակարդակում այն բխում է կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացումը խոչընդոտող խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Այսպիսով, ՀՀ Լոռու մարզում կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման նպատակը սահմանվում է որպես **ժամանակակից և նորարարական գործելակերպերի և տեխնոլոգիաների ներդրմամբ բարձրարժեք և մրցակցային գյուղատնտեսության ոլորտի կայուն և դիվերսիֆիկացված զարգացման ապահովում՝ կանաչ գյուղատնտեսության սկզբունքների և գործելակերպի վերաբերյալ առավելագույնս իրազեկման, կիրառության խթանման և օժանդակության միջոցով:** Մարզի համար սահմանված գերակայելի ոլորտներում կայուն / կանաչ ռազմավարությունների կիրառության անհրաժեշտությունը ներկայացվում է հաջորդիվ:

4.2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կայուն / կանաչ գյուղատնտեսության զարգացման կարևորագույն հիմնախնդիրը ներկա պահին այս գործելակերպի վերաբերյալ ոլորտի շահեկից կառույցների՝ ներառյալ քաղաքականությունն իրականացնողների, խորհրդատվական ծառայությունների մատուցողների և գյուղացիական տնտեսությունների տեղեկացվածության ցածր մակարդակն է և նրանց իրազեկման ուղղությամբ կառավարության ջանքերի անբավարարությունը կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ: Այս հիմնախնդրի լուծումը բազմափուլ է և նպատակահարմար է իրականացնել Հայաստանի բոլոր մարզերում: Խնդրի լուծման նպատակն ակնհայտ է՝ բարելավել գյուղացիական տնտեսությունների գիտելիքներն ու կարողությունները կայուն / կանաչ գյուղատնտեսության բնագավառում: Իրազեկման հիմնախնդրի լուծման ուղղությամբ հաջորդիվ առաջարկվող գործողությունները միտված են հատկապես հետևյալ կառույցներին և հաստատություններին.

1. Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական, ինչպես նաև գիտական հաստատություններին՝ ավարտին հասցնել կայուն գյուղատնտեսության վերաբերյալ կրթական ծրագրի պատրաստման գործընթացը, ներկայացնել համապատասխան գերատեսչական կառույցներին, վերջնականացնել և հաստատել այն: Մշակված ծրագիրը կիրառել որպես կրթական առարկա տվյալ դիսցիպլինան դասավանդող հաստատություններում: Միաժամանակ անհրաժեշտ է ապահովել տվյալ առարկայական ծրագրի նաև գործնական մատուցման ասպեկտը՝ դրա համար ստեղծելով անհրաժեշտ կրթական կյուբեր և կյուբատեխնիկական հենք:
2. Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական, գիտական հաստատություններին, ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և մասնագետներին՝ մշակել կայուն /կանաչ գյուղատնտեսության վերաբերյալ ոչ-ֆորմալ կրթական ծրագիր (կարճաժամկետ և միջնաժամկետ թեյնինգային ծրագրեր): Այս կրթական ծրագիրը պետք է օգտագործել գյուղացիական տնտեսություններին կայուն / կանաչ գործելակերպի տեսական և հատկապես գործնական ներկայացման նպատակով:
3. Գյուղատնտեսության զարգացման միջազգային կառույցներին՝ հնարավորինս օժանդակել կայուն / կանաչ գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ ծրագրերի մշակման գործընթացի արդյունավետ իրականացմանը, նպաստել միջազգային լավագույն փորձի ներկայացմանը և տեղայնացմանը, տեխնիկական և ֆինանսական օժանդակություն մատուցել կրթական փորձի փոխանակման գործընթացին և այդ փորձի ցուցադրական ներկայացմանը՝ մասնագիտական կրթության միջազգային փորձագետներին Հայաստան հրավիրելու, կրթվողների համար արտերկրյա ճանաչողական այցելություններ և ուսուցում կազմակերպելու առումներով:
4. Պետական կառույցներին¹¹՝ առավելագույն վարչական և կյուբական օժանդակություն մատուցել կայուն / կանաչ գյուղատնտեսության քաղաքական հայեցակարգի և ռազմավարության մշակմանը և համապատասխան պետական օժանդակության ծրագրերի ներդրմանը, ինչպես նաև իրականացնել դրանց իրականացման պատշաճ և արդյունավետ մշտադիտարկում և վերահսկողություն:

Կայուն / կանաչ գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների գիտելիքների և կարողությունների ընդհանրական բարելավմանը զուգահեռ, անհրաժեշտ է նաև իրականացնել կոնկրետ ռազմավարություններ և գործողություններ մարզի գյուղատնտեսության սահմանված գերակայելի ենթաոլորտներում զարգացման վերը հիշատակված խոչընդոտները հաղթահարելու և նոր գործելակերպերի ու մոտեցումների ներդրման համար: Ընդհանրապես գյուղատնտեսական զարգացմանը, ինչպես նաև կայուն / կանաչ գործելակերպի ներդրմանը խոչընդոտող գործոնների զգալի մասը նույնական են բոլոր ենթաոլորտներում և մարզերում, օրինակ՝ գիտելիքահեն մոտեցումը, ռեսուրսների խնայողական օգտագործումը և այլն: Այնուամենայնիվ, առնվազն գործողությունների իրականացման մակարդակում հատուկ և կոնկրետ մոտեցումները հնարավոր են:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներկայացված ռազմավարությունները վերաբերում են միայն ագրեգացված հիմնական խնդիրներին, որոնց ցանկը իրականում զգալիորեն ավելի երկար է:

¹¹ Ներկա պահին՝ ոլորտի զարգացումը համակարգող գերատեսչությունը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն է

Նկար 3 - ՀՀ Տավուշի մարզում կայուն / կանաչ գյուղատնտեսության վարման խնդիրները և լուծման ուղիները

Ենթաոլորտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
Կարտոֆիլի մշակություն	<ul style="list-style-type: none"> ▪ Ոռոգման համակարգի վատ վիճակ և անարդյունավետ կառավարում 	<ul style="list-style-type: none"> ➢ Ջրային ռեսուրսների արդյունավետ և ինսյուրակա օգտագործում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Բերքատվության աճ ➢ Հողի որակի բարելավում ➢ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Դաշտերի խոնավության աստիճանի գնահատում արդի տեխնոլոգիաներով՝ դրոններով և սենսորներով ✓ Ակոսային ոռոգման դադարեցում և արդի ինսյուրակա համակարգերի տեղադրում՝ կաթիլային, շիթային, ցողային, ջրցան ✓ Գերխոնավեցման բացառում (դրենաժային համակարգի բարելավում) ✓ Բնական տեղանքային հնարավորությունների օգտագործմամբ փոքր ջրամբարների հիմնում՝ անձրևաջրերի և այլ բնական աղբյուրների ջրերի հավաքման և արդյունավետ կառավարման նպատակով ✓ Կարտոֆիլի սորտերի ընտրություն՝ հաշվի առնելով տվյալ սորտի կողմից ջրի օգտագործման արդյունավետության գործակիցը ✓ Մշակաբույսի համար ոռոգման համապատասխան ժամանակացույցի կազմում
	<ul style="list-style-type: none"> ▪ ԳՏ տեխնիկայի, մեխանիզացիայի և սարքավորումների մաշվածություն և անբավարարություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Արդյունավետության աճ ➢ Ծախսերի կրճատում ➢ Մշակության ընդլայնում ➢ Արտադրանքի որակի բարելավում ➢ Հողի վրա ճնշման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Բազմաֆունկցիոնալ (հերկման, ցանքսի, կուլտիվացիայի, բերքահավաքի և այլ մեքենաներ և սարքավորումներ ունեցող) ԳՏ մեխանիզացիայի պարկի/պարկերի հիմնում ✓ Նվազագույն հերկի կիրառություն ✓ (Կիսա)Ավտոնոմ մեխանիզացիայի կիրառություն (օրինակ՝ մոտոբլոկների, կուլտիվատորների և այլն)
	<ul style="list-style-type: none"> ▪ Պահեստավորման ենթակառուցվածքների անբավարարություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրանքի որակի պահպանում և կորուստների կրճատում ➢ Ապրանքային տեսքի ապահովում ➢ Ֆերմերների և շուկայի միջև շարունակական կապի ապահովում ➢ Վաճառքի ցիկլի երկարեցում 	<ul style="list-style-type: none"> ✓ Մթերման, սառը պահպանման, սորտավորման, չափաբերման, մաքրման, չորացման, փաթեթավորման և մակնշման ենթակառուցվածքների (այդ թվում ժամանակակից սառնարանային տնտեսությունների) հիմնում ✓ Կարգավորող և վերահսկող սենսորային ավտոմատացված տեխնոլոգիաների կիրառություն ✓ Հետբերքահավաքային ընթացակարգերի և բերքի պահման պայմանների վերաբերյալ կարողությունների զարգացում ✓ Որակի վերահսկողության և սննդի անվտանգության համալիր միջոցառումների կիրառություն ✓ ԳՏ թափոնների կայուն կառավարման համակարգերի ներդրում
	<ul style="list-style-type: none"> ▪ Ժամանակակից և կայուն տեխնոլոգիաների 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Արտադրանքի որակի 	<ul style="list-style-type: none"> ✓ Ցանքաշրջանառության իրականացում (լոբազգի մշակաբույսերի կիրառությամբ) ✓ Հողերի նվազագույն մշակության և սննդային տարրերի վերականգնման

Ենթաաղյուրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	անբավարար կիրառություն	բարելավում ➤ Յոթի վերականգնում և կառավարման բարելավում	<ul style="list-style-type: none"> ✓ Նպատակով մինչև մեռային մշակության սահմանափակում ✓ Կենսաբազմազանության պահպանության նպատակով հողերի մշակության մասնակի սահմանափակում ✓ Յոթի խոնավության պահպանման նպատակով ծածկող ճիշտ բուսատեսակների կիրառություն ✓ Կանաչ / օրգանական գյուղատնտեսական գործելակերպերի և ստանդարտների ներդրում և կիրառում (հողում սննդանյութերի կառավարում, գոմաղբի կառավարում և այլն) ✓ Արհեստական պարարտանյութերի օգտագործման կրճատում, գոմաղբի և օրգանական պարարտանյութերի ճիշտ կիրառություն ✓ Վնասատուների ինտեգրված կառավարման մոտեցումների ներդրում՝ քիմիական թունաքիմիկատների կիրառման նվազեցման նպատակով ✓ Չակակարկտային կայանների, կարկտապաշտպան ցանցերի կամ համակարգերի տեղադրում և արդյունավետ կիրառում ✓ Դրոնների, համակարգչային և ավտոմատացված տեխնիկայի և ծրագրային հավելվածների կիրառություն իրավիճակային գնահատումների, ոռոգման, դեղամիջոցների կիրառության և այլ ագրո-տեխնոլոգիաների հեռավար կառավարման նպատակով
	<ul style="list-style-type: none"> ▪ Պարարտանյութերի օգտագործման և վնասատուների դեմ պայքարի միջոցների չհամակարգված կիրառություն և անարդյունավետություն 	<ul style="list-style-type: none"> ➤ Բերքի կորուստների կրճատում ➤ Բույսերի պաշտպանության արդյունավետության բարելավում ➤ Արտադրված սննդի որակի բարելավում ➤ Քիմիկատների օգտագործման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Կառավարման հատուկ գործառնություններով և թունաքիմիկատների գրոյական կիրառմամբ բուժերային գոտիների ստեղծում, ✓ Մոլախոտերի և վնասատուների դեմ մեխանիկական, կենսաբանական, և ֆիզիկական պայքար, ✓ Քիմիական դեղամիջոցների կիրառության սահմանափակում, պայքարի օրգանական միջոցների կիրառություն ✓ Դիմակայուն, վնասատուների դեմ դիմացկուն մշակաբույսերի սորտերի և տեսակների մշակություն, ✓ Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի նպատակով մշակաբույսերի համակցված մշակություն ✓ Օգտակար կենսագիշատիչների պահպանում և զարգացում համապատասխան կեցավայրի ստեղծման միջոցով ✓ Սրսկումների իրականացման ճշգրիտ ժամանակի սահմանում՝ գունային և ֆերամոնային թակարդների, կաչուն ժապավենների օգտագործման միջոցով
Չացահատիկի մշակություն	<ul style="list-style-type: none"> ▪ Ոռոգման համակարգի վատ վիճակ և 	<ul style="list-style-type: none"> ➤ Ջրային ռեսուրսների արդյունավետ և 	<ul style="list-style-type: none"> ✓ Դաշտերի խոնավության աստիճանի գնահատում արդի տեխնոլոգիաներով՝ դրոններով և սենսորներով

Ենթաուլրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	անարդյունավետ կառավարում	<ul style="list-style-type: none"> ▶ ինսյուդական օգտագործում ▶ Բերքի կորուստների կրճատում ▶ Բերքատվության աճ ▶ Հողի որակի բարելավում ▶ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Ոռոգման արդի ինսյուդական համակարգերի տեղադրում՝ ցողային, ջրցան ✓ Գերխոնավեցման բացառում ✓ Հողի դրենաժային համակարգի ստուգում և բարելավում ✓ Բնական տեղանքային հնարավորությունների օգտագործմամբ փոքր ջրամբարների հիմնում՝ անձրևաջրերի և այլ բնական աղբյուրների ջրերի հավաքման նպատակով
	<ul style="list-style-type: none"> ▪ ԳՏ մեխանիզացիայի, մեխանիզացիայի և սարքավորումների մաշվածություն և անբավարարություն 	<ul style="list-style-type: none"> ▶ Արդյունավետության աճ ▶ Ծախսերի կրճատում ▶ Մշակության ընդլայնում ▶ Բերքի կորուստների կրճատում ▶ Հողի վրա ճնշման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Բազմաֆունկցիոնալ (հերկման, ցանքսի, կուլտիվացիայի, բերքահավաքի և այլ մեքենաներ և սարքավորումներ ունեցող) ԳՏ մեխանիզացիայի պարկի/պարկերի հիմնում ✓ Նվազագույն հերկի կիրառություն ✓ (Կիսա)Ավտոնոմ մեխանիզացիայի կիրառություն (օրինակ՝ մոտոբլոկների, կուլտիվատորների, խոտամամիչների և այլն) ✓ Բերքահավաքի ժամանակակից կոմբայնների կիրառություն
	<ul style="list-style-type: none"> ▪ Պահեստավորման ենթակառուցվածքների անբավարարություն 	<ul style="list-style-type: none"> ▶ Բերքի կորուստների կրճատում ▶ Ապրանքային տեսքի և որակի ապահովում ▶ Ֆերմերների և շուկայի միջև կապի ապահովում ▶ Վաճառքի ցիկլի երկարեցում 	<ul style="list-style-type: none"> ✓ Մթերման և պահպանման բունկերների հիմնում ✓ Հետբերքահավաքային ընթացակարգերի և բերքի պահման պայմանների վերաբերյալ կարողությունների զարգացում ✓ Կարգավորող և վերահսկող սենսորային ավտոմատացված տեխնոլոգիաների կիրառություն ✓ ԳՏ թափոնների կայուն կառավարման համակարգերի ներդրում, անասնակերի առանձնացում
	<ul style="list-style-type: none"> ▪ Ժամանակակից և կայուն տեխնոլոգիաների անբավարար կիրառություն 	<ul style="list-style-type: none"> ▶ Արտադրողականության աճ ▶ Արտադրանքի որակի բարելավում ▶ Հողի վերականգնում և կառավարման բարելավում ▶ Վնասատուների դեմ պայքար 	<ul style="list-style-type: none"> ✓ Ցանքաշրջանառության իրականացում (լոբզգի մշակաբույսերի կիրառությամբ) ✓ Հողերի նվազագույն մշակության և սննդային տարրերի վերականգնման նպատակով մինչձմեռային մշակության սահմանափակում ✓ Կենսաբազմազանության պահպանության նպատակով հողերի մշակության մասնակի սահմանափակում ✓ Կանաչ / օրգանական գյուղատնտեսական գործելակերպերի և ստանդարտների կիրառում ✓ Քիմիական պարատանյութերի օգտագործման կրճատում, գոմաղբի և օրգանական պարատանյութերի կիրառություն ✓ Ծածկող ճիշտ բուսատեսակների կիրառություն ✓ Վնասատուների ինտեգրված կառավարման մոտեցումների ներդրում

Ենթաուղրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	<ul style="list-style-type: none"> ▪ Վնասատուների դեմ անկայուն պայքար և անարդյունավետություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Վնասատուների դեմ ինտեգրված պայքարի զարգացում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Բույսերի պաշտպանության արդյունավետության բարելավում ➢ Արտադրված սննդի որակի բարելավում ➢ Հողի որակի բարելավում ➢ Քիմիկատների օգտագործման կրճատում 	<p>քիմիական թունաքիմիկատների կիրառման նվազեցման նպատակով</p> <ul style="list-style-type: none"> ✓ Հակակարկտային կայանների կամ համակարգերի տեղադրում և արդյունավետ կիրառում ✓ Դրոնների, համակարգչային և ավտոմատացված տեխնիկայի և ծրագրային հավելվածների կիրառություն իրավիճակային գնահատումների, ոռոգման, դեղամիջոցների կիրառության և այլ ագրո-տեխնոլոգիաների հեռավար կառավարման նպատակով ✓ Կառավարման հատուկ գործառնություններով և թունաքիմիկատների գրոյական կիրառմամբ բուժքերային գոտիների ստեղծում, ✓ Մոլախոտերի և վնասատուների դեմ մեխանիկական, կենսաբանական, և ֆիզիկական պայքար, ✓ Քիմիական դեղամիջոցների կիրառության սահմանափակում, պայքարի օրգանական միջոցների կիրառություն ✓ Դիմակայուն, վնասատուների դեմ դիմացկուն մշակաբույսերի սորտերի և տեսակների մշակություն ✓ Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի նպատակով մշակաբույսերի համակցված մշակություն ✓ Սրսկումների իրականացման ճշգրիտ ժամանակի սահմանում գունային և ֆերամոնային թակարդների, կաչուն ժապավենների օգտագործման միջոցով
Բանջարանոցային մշակաբույսերի մշակություն	<ul style="list-style-type: none"> ▪ Ոռոգման համակարգի վատ վիճակ և անարդյունավետ կառավարում 	<ul style="list-style-type: none"> ➢ Ջրային ռեսուրսների արդյունավետ և ինսայողական օգտագործում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Բերքատվության աճ ➢ Հողի որակի բարելավում ➢ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Դաշտերի խոնավության աստիճանի գնահատում արդի տեխնոլոգիաներով՝ դրոններով և սենսորներով ✓ Ակոսային ոռոգման դադարեցում և արդի ինսայողական համակարգերի տեղադրում՝ կաթիլային, շիթային, ցողային, ջրցան ✓ Գերխոնավեցման բացառում (դրենաժային համակարգի բարելավում) ✓ Բնական տեղանքային հնարավորությունների օգտագործմամբ փոքր ջրամբարների հիմնում՝ անձրևաջրերի և այլ բնական աղբյուրների ջրերի հավաքման և արդյունավետ կառավարման նպատակով ✓ Մշակաբույսերի սորտերի ընտրություն՝ հաշվի առնելով տվյալ սորտի կողմից ջրի օգտագործման արդյունավետության գործակիցը ✓ Մշակաբույսի համար ոռոգման համապատասխան ժամանակացույցի կազմում
	<ul style="list-style-type: none"> ▪ ԳՏ տեխնիկայի, 	<ul style="list-style-type: none"> ➢ Արդյունավետության աճ 	<ul style="list-style-type: none"> ✓ Բազմաֆունկցիոնալ (հերկման, ցանքսի, կուլտիվացիայի, բերքահավաքի և այլ

Ենթաուլորտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	<p>մեխանիզացիայի և սարքավորումների անբավարարություն</p> <p>▪ Պահեստավորման և վերամշակման ենթակառուցվածքների անբավարարություն</p> <p>▪ Ժամանակակից և կայուն տեխնոլոգիաների անբավարար կիրառություն</p>	<p>➢ Ծախսերի կրճատում</p> <p>➢ Մշակության ընդլայնում</p> <p>➢ Արտադրանքի որակի բարելավում</p> <p>➢ Հողի վրա ճնշման կրճատում</p> <p>➢ Արտադրանքի որակի պահպանում և կորուստների կրճատում</p> <p>➢ Ապրանքային տեսքի ապահովում</p> <p>➢ Ֆերմերների և շուկայի միջև կապի շարունակական ապահովում</p> <p>➢ Բարձր գնով իրացում</p> <p>➢ Արտադրողականության աճ</p> <p>➢ Արտադրանքի որակի բարելավում</p> <p>➢ Հողի վերականգնում և կառավարման բարելավում</p>	<p>մեքենաներ և սարքավորումներ ունեցող) ԳՏ մեխանիզացիայի պարկի/պարկերի հիմնում</p> <p>✓ Նվազագույն հերկի կիրառություն</p> <p>✓ (Կիսա)Ավտոնոմ մեխանիզացիայի կիրառություն (օրինակ՝ մոտոբլոկների, կուլտիվատորների և այլն)</p> <p>✓ Բերքահավաքի ժամանակակից տեխնիկայի կիրառություն</p> <p>✓ Մթերման, սառը պահպանման, սորտավորման, չափաբերման, մաքրման, փաթեթավորման, մակնշման և վերամշակման ենթակառուցվածքների (այդ թվում ժամանակակից սառնարանային տնտեսությունների, լոգիստիկ կենտրոնների) հիմնում</p> <p>✓ Կարգավորող և վերահսկող սենսորային ավտոմատացված տեխնոլոգիաների կիրառություն</p> <p>✓ Հետբերքահավաքային ընթացակարգերի և բերքի պահման պայմանների վերաբերյալ կարողությունների զարգացում</p> <p>✓ Որակի վերահսկողության և սննդի անվտանգության համալիր միջոցառումների կիրառություն</p> <p>✓ ԳՏ թափոնների կայուն կառավարման համակարգերի ներդրում</p> <p>✓ Ցանքաշրջանառության իրականացում (լրբագի և այլ մշակաբույսերի կիրառությամբ)</p> <p>✓ Հողերի նվազագույն մշակության և սննդային տարրերի վերականգնման նպատակով մինչձմեռային մշակության սահմանափակում</p> <p>✓ Կենսաբազմազանության պահպանության նպատակով հողերի մշակության մասնակի սահմանափակում</p> <p>✓ Հողի խոնավության պահպանման նպատակով ծածկող ճիշտ բուսատեսակների կիրառություն</p> <p>✓ Կանաչ / օրգանական գյուղատնտեսական գործելակերպերի և ստանդարտների ներդրում և կիրառում (հողում սննդանյութերի կառավարում, գոմաղբի կառավարում և այլն)</p> <p>✓ Արհեստական պարարտանյութերի օգտագործման կրճատում, գոմաղբի և օրգանական պարարտանյութերի ճիշտ կիրառություն</p> <p>✓ Վնասատուների ինտեգրված կառավարման մոտեցումների ներդրում՝ քիմիական թունաքիմիկատների կիրառման նվազեցման նպատակով</p> <p>✓ Հակակարկտային կայանների, կարկտապաշտպան ցանցերի կամ համակարգերի տեղադրում և արդյունավետ կիրառում</p>

Ենթաուրրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	<ul style="list-style-type: none"> ▪ Պարարտանյութերի օգտագործման և վնասատուների դեմ պայքարի միջոցների չհամակարգված կիրառություն և անարդյունավետություն ▪ Մշակության փոքր ծավալներ ▪ Հողերի փոքրություն և մասնատվածություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Վնասատուների դեմ ինտեգրված պայքարի զարգացում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Բույսերի պաշտպանության արդյունավետության բարելավում ➢ Արտադրված սննդի որակի բարելավում ➢ Հողի որակի բարելավում ➢ Զիմիկատների օգտագործման կրճատում ➢ Մշակաբույսերի հավելյալ արժեքի ավելացում ➢ Ծախսերի կրճատում ➢ Շուկայի հասանելիության բարելավում ➢ Արտադրության ծավալների աճ ԳՏ տեխնիկայի օգտագործման շնորհիվ ➢ Վնասատուների դեմ պայքարի համակարգված միջոցառումներ ➢ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Դրոնների, համակարգչային և ավտոմատացված տեխնիկայի և ծրագրային հավելվածների կիրառություն իրավիճակային գնահատումների, պլանավորման, ոռոգման, դեղամիջոցների կիրառության և այլ ագրո-տեխնոլոգիաների հեռավար կառավարման նպատակով ✓ Կառավարման հատուկ գործառնություններով և թունաքիմիկատների գրոյական կիրառմամբ բուժերային գոտիների ստեղծում, ✓ Մոլախոտերի և վնասատուների դեմ մեխանիկական, կենսաբանական, և ֆիզիկական պայքար, ✓ Զիմիկատների դեղամիջոցների կիրառության սահմանափակում, պայքարի օրգանական միջոցների կիրառություն ✓ Դիմակայուն, վնասատուների դեմ դիմացկուն մշակաբույսերի սորտերի և տեսակների ընտրություն, ձեռքբերում և մշակություն, ✓ Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի նպատակով մշակաբույսերի համակցված մշակություն ✓ Օգտակար կենսազիջատիչների պահպանում և զարգացում համապատասխան կեցավայրի ստեղծման միջոցով ✓ Սրկումների իրականացման ճշգրիտ ժամանակի սահմանում՝ գունային և ֆերամոնային թակարդների, կաշուն ժապավենների օգտագործման միջոցով ✓ Լոգիստիկ կենտրոնների ստեղծում ✓ Միջազգայնորեն ճանաչված ստանդարտների ներդրում և կիրառում ✓ Կոոպերատիվների ստեղծում խոցելի խմբերի՝ կանանց, երիտասարդների և այլն ներառմամբ: ✓ Հիմնել ԳՏ կոոպերատիվներ կամ կիրառել կոոպերացիայի այլ միջոցառումներ ✓ Նպաստել հողերի և տնտեսությունների խոշորացմանը
Մեղվաբուծություն	<ul style="list-style-type: none"> ▪ Բույսերի պաշտպանության քիմիական միջոցների 	<ul style="list-style-type: none"> ➢ Մեղվաընտանիքների անկման կրճատում ➢ Արտադրողականության 	<ul style="list-style-type: none"> ✓ Այգիների պաշտպանության կայուն միջոցառումներ՝ քիմիկատների սահմանափակ կիրառություն, բնական միջոցներով պաշտպանություն ✓ Վնասատուների ինտեգրված կառավարման մոտեցումների ներդրում

Ենթաուլորտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	ինտենսիվ օգտագործում	աճ	
	<ul style="list-style-type: none"> ▪ Մեղունների հիվանդությունների կանխարգելման միջոցների կիրառում 	<ul style="list-style-type: none"> ➢ Մեղվաընտանիքների անկման կրճատում ➢ Արտադրողականության աճ 	<ul style="list-style-type: none"> ✓ Մեղունների հիվանդությունների (օրինակ՝ տիզ, Վարոատոզ և այլն) դեմ պայքարի անվնաս միջոցների կիրառություն ✓ Հակաբիոտիկների և այլ դեղամիջոցների փոխարինում օրգանական/բնական միջոցներով
	<ul style="list-style-type: none"> ▪ Ավանդական գործելակերպ, մեղվի հիվանդություններ 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Մեղվաընտանիքների անկման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Նոր տեխնոլոգիաների, փեթակների, կերակրման և բուժման մեթոդների կիրառություն ✓ Բարձր տոհմային հատկանիշներ ունեցող նոր մայրերի ներմուծում
	<ul style="list-style-type: none"> ▪ Մասնագետների պակաս 	<ul style="list-style-type: none"> ➢ Արդյունավետ խորհրդատվություն ➢ Մեղվաընտանիքների անկման կրճատում ➢ Արտադրողականության աճ 	<ul style="list-style-type: none"> ✓ Խորհրդատվական ծառայությունների/կետերի ձևավորում ✓ Մասնագիտական դասընթացների իրականացում ✓ Կրթական նյութերի պատրաստում, ներկայացում, պարբերական թարմացում և տարածում
	<ul style="list-style-type: none"> ▪ Փոքր ծավալ 	<ul style="list-style-type: none"> ➢ Ծախսերի կրճատում ➢ Արտադրանքի քանակի աճ 	<ul style="list-style-type: none"> ✓ Արտադրողների և ֆերմերային տնտեսությունների կոնսոլիդացիա, ✓ Մեղվաընտանիքների թվի աճի խթանում, օժանդակում ✓ Օրգանական և կանաչ գյուղատնտեսության ստանդարտների/մոտեցումների ներդրում և կիրառում
Տավարաբուծություն	<ul style="list-style-type: none"> ▪ Անբավարար արտադրողականություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Ծախսերի կրճատում ➢ Գլխաքանակի անկման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Գլխաքանակի թարմացում, ✓ Տոհմային գործ, գենետիկ հատկանիշների և բազմազանության բարելավում ✓ Արհեստական սերմավորում ✓ Ծննդաբերության բարձր ցուցանիշների ապահովում, կովերի երկարակեցության ապահովում
	<ul style="list-style-type: none"> ▪ Անբավարար կերակրում 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Կաթի և մսի որակ բարելավում 	<ul style="list-style-type: none"> ✓ Կենդանիների կերակրման օպտիմալացում, սննդի և ջրի հասանելիության բարձրացում ✓ Հեռագնա արոտների կայուն կառավարում և օգտագործում ✓ Արոտների կայուն կառավարում, արածեցման ժամանակահատվածի երկարեցում, արոտների հասանելիության բարելավում, ✓ GPS և տեղորոշման այլ համակարգերի կիրառում ✓ Կայուն և արդյունավետ կերարտադրության կազմակերպում ✓ Հավասարակշռված և հեշտ մարսելի կազմությամբ կերակրման

Ենթադրուրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	<ul style="list-style-type: none"> ▪ Անբավարար պահպանություն 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ 	<p>կազմակերպում</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կենդանիների կեցավայրերի (գոմային) պայմանների բարելավում՝ տարածքների ընդարձակում, հատակների՝ կանգնելու և պառկելու տեղերի ծրարով ծածկում, առանց կապի պահվածք, բարձր առաստաղ, պատշաճ օդափոխություն և լուսավորություն, ջրի հասանելիություն և այլն ✓ Օրգանական գյուղատնտեսությամբ նախատեսված ստանդարտների և գործելակերպերի կիրառում ✓ Ավտոմատացված կիթ ✓ Պահվածքի վայրում գոմաղբի պատշաճ կառավարում, գոմաղբի համար համապատասխան պահման վայրերի ստեղծում, բիոգազի արտադրության կազմակերպում ✓ Կենդանիների համար բացօթյա տարածքների հասանելիության բարելավում
	<ul style="list-style-type: none"> ▪ Անբավարար բուժում 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Գլխաքանակի անկման կրճատում ➢ Հիվանդություններից գերծ տարածքների ստեղծում 	<ul style="list-style-type: none"> ✓ Անասնաբույժերի որակավորման շարունակական բարելավում ✓ Անասնաբույժերի հասանելիության բարելավում ✓ Անասնաբուժական դեղամիջոցների հասանելիության բարելավում ✓ Անասնաբուժական ծառայություններ մատուցելու ենթակառուցվածքների բարելավում ✓ Կենդանիների պատվաստման և կանխարգելիչ սրսկումների հստակ ժամկետների սահմանում ✓ Կենդանիների մենդակարգի վերահսկողություն, անհրաժեշտ մենդակարգերով և վիտամիններով ապահովում
	<ul style="list-style-type: none"> ▪ Արոտների վատ վիճակ և սխալ կառավարում 	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Հողերի վերականգնում ➢ Որակի բարելավում 	<ul style="list-style-type: none"> ✓ Արոտների վիճակի համապարփակ գնահատում ✓ Հեռագնա արոտների հասանելիության բարելավում, ✓ Արոտների կայուն կառավարման պլանների մշակում և կիրառություն ✓ Խոտհարքներում և այլ հողատեսքերում կենսաբազմազանության պահպանության (բույսերի փոշոտման, բույսերի և կենդանիների կերակրման) նպատակով մշակաբույսերի խառը սորտերի և տեսակների մշակություն

Ենթաաղյուրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
Հատապտուղների մշակություն	Ոռոգման համակարգի վատ վիճակ և անարդյունավետ կառավարում	<ul style="list-style-type: none"> ➢ Ջրային ռեսուրսների արդյունավետ և ինայողական օգտագործում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Բերքատվության աճ ➢ Հողի որակի բարելավում ➢ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Հողի խոնավության աստիճանի գնահատում արդի տեխնոլոգիաներով՝ դրոններով և սենսորներով ✓ Արդի ինայողական համակարգերի տեղադրում՝ կաթիլային, ջրցան և այլն ✓ Գերխոնավեցման բացառում (դրենաժային համակարգի բարելավում) ✓ Բնական տեղանքային հնարավորությունների օգտագործմամբ փոքր ջրամբարների հիմնում՝ անձրևաջրերի և այլ բնական աղբյուրների ջրերի հավաքման և արդյունավետ կառավարման նպատակով ✓ Մշակաբույսի համար ոռոգման համապատասխան ժամանակացույցի կազմում
	Լոգիստիկ կենտրոնների անբավարարություն	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրանքի որակի պահպանում և կորուստների կրճատում ➢ Ապրանքային տեսքի ապահովում ➢ Ֆերմերների և շուկայի միջև կապի ապահովում ➢ Բարձր գնով իրացում 	<ul style="list-style-type: none"> ✓ Մթերման, սառը պահպանման, սորտավորման, չափաբերման, մաքրման, չորացման, փաթեթավորման և մակնշման ենթակառուցվածքների հիմնում ✓ Կարգավորող և վերահսկող սենսորային ավտոմատացված տեխնոլոգիաների կիրառություն ✓ Որակի վերահսկողության և սննդի անվտանգության համալիր միջոցառումների կիրառություն ✓ Հետբերքահավաքային ընթացակարգերի և բերքի պահման պայմանների վերաբերյալ կարողությունների զարգացում ✓ (Կիսա)ավտոմատացված դիստրիբուցիոն համակարգի ստեղծում ✓ ՉՏ թափոնների կայուն կառավարման համակարգերի ներդրում
	Ժամանակակից տեխնոլոգիաների և կանաչ / կայուն գործելակերպի անբավարար կիրառություն	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրողականության աճ ➢ Արտադրանքի որակի բարելավում ➢ Հողի կառավարման բարելավում 	<ul style="list-style-type: none"> ✓ Այգիներում ծառերի միջշարային ցանքեր ✓ Կենսաբազմազանության պահպանության նպատակով հողերի մշակության մասնակի սահմանափակում ✓ Կանաչ / օրգանական գյուղատնտեսական գործելակերպերի և ստանդարտների ներդրում և կիրառում (հողում սննդանյութերի կառավարում, գոմաղբի կառավարում և այլն) ✓ Ծածկող ճիշտ բուսատեսակների կիրառություն ✓ Արհեստական պարարտանյութերի օգտագործման կրճատում, գոմաղբի մշակում և ճիշտ կիրառություն ✓ Դրոնների, համակարգչային և ավտոմատացված տեխնիկայի և ծրագրային հավելվածների կիրառություն իրավիճակային գնահատումների, ոռոգման, դեղամիջոցների կիրառության և այլ ագրո-տեխնոլոգիաների հեռավար կառավարման նպատակով ✓ Վնասատուների ինտեգրված կառավարման մոտեցումների ներդրում՝ քիմիական թունաքիմիկատների կիրառման նվազեցման նպատակով

Ենթաուղրտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
	Պարարտանյութերի օգտագործման և վնասատուների դեմ պայքարի միջոցների չհամակարգված կիրառություն և անարդյունավետություն	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրանքի որակի բարելավում ➢ Բերքի կորուստների կրճատում ➢ Արտադրողականության աճ ➢ Հողի որակի բարելավում ➢ Զիմիկատների օգտագործման կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Կառավարման հատուկ գործառնություններով և թունաքիմիկատների զրոյական կիրառմամբ բուժերային գոտիների ստեղծում, ✓ Մոլախոտերի և վնասատուների դեմ մեխանիկական, կենսաբանական, և ֆիզիկական պայքար, ✓ Զիմիկատների դեղամիջոցների կիրառության սահմանափակում, պայքարի օրգանական միջոցների կիրառություն ✓ Դիմակայուն, վնասատուների դեմ դիմացկուն մշակաբույսերի սորտերի և տեսակների ընտրություն, ձեռքբերում և մշակություն, ✓ Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի նպատակով մշակաբույսերի համակցված մշակություն ✓ Օգտակար կենսագիշատիչների պահպանում և զարգացում համապատասխան կեցավայրի ստեղծման միջոցով ✓ Սրսկումների իրականացման ճշգրիտ ժամանակի սահմանում՝ գունային և ֆերամոնային թակարդների, կաշուն ժապավենների օգտագործման միջոցով
	Հողերի փոքրություն և մասնատվածություն	<ul style="list-style-type: none"> ➢ Արտադրության ծավալների աճ ՊՏ տեխնիկայի օգտագործման շնորհիվ ➢ Վնասատուների դեմ պայքարի համակարգված միջոցառումներ ➢ Ծախսերի կրճատում 	<ul style="list-style-type: none"> ✓ Հիմնել ՊՏ կոոպերատիվներ կամ կիրառել կոոպերացիայի այլ միջոցառումներ ✓ Նպաստել հողերի և տնտեսությունների խոշորացմանը
Այլ ընդհանրական խնդիրներ		<ul style="list-style-type: none"> ➢ Կայուն / Կանաչ գործելակերպի ներդրում 	<ul style="list-style-type: none"> ✓ Կենսաբազմազանության պահպանությանը նպաստող բուսածածկույթի ապահովում, բարձր կենսաբազմազանությամբ (բազմաթիվ տարբեր տեսակի օրգանիզմներ և բուսատեսակներ) անտառաարտային համակարգերի ստեղծում և պահպանում, ✓ Այգիներում և վարելահողերում մշակաբույսերի և ծառերի միջարային տարածքներում արածեցման կազմակերպում, ✓ Կենդանիների և բույսերի համար մասնակի - բնական կեցավայրի ստեղծում և պահպանում, ✓ Խոտհարքներում և այլ հողատեսքերում կենսաբազմազանության պահպանության (բույսերի փոշոտման, բույսերի և կենդանիների կերակրման) նպատակով մշակաբույսերի խառը սորտերի և տեսակների մշակություն ✓ Բույսերի և տեսակների խառը մշակություն



Ենթաուլորտ	Խնդիր	Լուծման հիմնական նպատակ	Կայուն / Կանաչ գործելակերպ
		<p>➤ Մարզերում ժամանակակից լաբորատոր կարողությունների ձևավորում՝ ֆերմերների համար գյուղատնտեսական առաջադեմ ծառայությունների հասանելիությունը բարելավելու նպատակով</p>	<p>✓ Կոմպոստավորում և կոմպոստի կիրառություն, մուլչավորում ✓ Այգիներում ծառերի և/կամ հիմնական մշակաբույսերի միջշարային ցանքեր ✓ Կլիմայի փոփոխությանը դիմակայուն մշակաբույսերի տեսակների կիրառություն:</p> <p>✓ Զոդի և ջրի սննդային արժեքների և որակի գնահատման լաբորատորիաների ստեղծում և պահպանում ✓ Լաբորատոր մասնագետների և դասընթացավարների պատրաստում և շարունակական վերապատրաստում ✓ Ֆերմեր-լաբորատորիա վստահության և կայուն կապի ձևավորում:</p>

5. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերակա ոլորտների ընտրության ժամանակ կիրառված հիմնական և կարևոր չափորոշիչներից մեկը տվյալ արտադրանքի նկատմամբ շուկայում պահանջարկի առկայությունն է և ապրանքայնության մակարդակը: Ընդհանրապես, արտադրանքի շուկայավարման ներուժն ու հնարավորությունները ցանկացած գործունեությամբ զբաղվելու կարևորագույն նախապայման են հանդիսանում: Ընտրված գերակա ենթաօլորտների շուկայավարման հնարավորությունները վերլուծվել են հետևյալ հիմնական տեսանկյուններից.

- Սպառողների հատվածավորումը (սեգմենտավորում): Որքան հստակ է տվյալ արտադրանքի թիրախային շուկան, այնքան հեշտ է իրականացնել այդ ապրանքի շուկայավարումը և խթանումը, հետևաբար նաև վաճառքը:
- Շուկայի պահանջարկ՝ գնման պատրաստակամություն: Առկա շուկայական պահանջարկը գյուղատնտեսության որևէ ենթաօլորտում գործունեություն իրականացնելու կարևորագույն նախադրյալներից և հաջողության գրավականներից է: Առանց պահանջարկի, անիմաստ է տվյալ արտադրանքի շուկայահանումը:
- Ուղղակի և անուղղակի մրցակցություն: Մրցակցությունը զարգացման շարժիչ ուժն է, սակայն շատ սուր լինելու պարագայում (օրինակ՝ արտաքին դեմպինգի) կարող է հանգեցնել կոնկրետ տնտեսվարողի, երբեմն նույնիսկ ողջ ոլորտի տապալման:
- Փոխարինող ապրանքներ: Շուկայում տարատեսակ փոխարինող ապրանքների առկայությունը մրցակցության դրսևորման փաստացի ձևերից է: Այն կարող է ինչպես խթանել զարգացումը, այնպես էլ տապալել գործունեությունը:
- Արտահանման հնարավորությունները արտադրանքի շուկայավարման լավագույն տարբերակն է, որը թույլ է տալիս գործունեությունը կազմակերպել միջազգային մակարդակում մրցունակ եղանակով և շարունակաբար զարգանալ:
- Բնապահպանական ազդեցությունը կայուն / կանաչ գյուղատնտեսության համատեքստում կարևորագույն նշանակություն ունի: Ժամանակակից աշխարհում, որևէ անկայուն և բնությանը վնաս հասցնող գործելակերպ չի կարող նպաստել ռազմավարական զարգացմանը, արտաքին շուկաներում դիրքավորմանը և, հետևաբար, մարզի գյուղատնտեսության զարգացմանը:

Ներկայացված տեսանկյունների համադրելի գնահատման նպատակով կիրառվել է ինֆոգրաֆիկ ներկայացման եղանակը: Ստորև ներկայացված գրաֆիկներում օգտագործվում են երկու գունային մոտեցումները և դրանց համադրությունը՝ հետևյալ բացատրությամբ.

	<p>Ամբողջությամբ կապույտ Վկայում է, որ տվյալ ապրանքը կարող է հաջողությամբ արտադրվել, տվյալ չափորոշիչի տեսանկյունից համարվում է ամբողջությամբ կիրառելի և ընդունելի:</p>
	<p>Ամբողջությամբ երկնագույն Վկայում է, որ տվյալ ապրանքը հաջող արտադրության պայմաններում, տվյալ չափորոշիչի տեսանկյունից, չի համարվում կիրառելի և կարող է հանգեցնել ինդիկների/դժվարությունների:</p>

Նկար 4 - Գերակա ենթաօլորտների արտադրանքի սպառողների հատվածավորումը

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Շուկան հստակ թիրախավորված և սեգմենտավորված չէ: Հիմնականում իրականացվում է մեծածախ շուկաների միջոցով:	Շուկան մասնակի թիրախավորված և սեգմենտավորված է: Հիմնականում իրացվում է կոնկրետ խոշոր մթերողներին՝ նաև այլուրի տեսքով:	Շուկան հստակ թիրախավորված և սեգմենտավորված չէ: Հիմնականում իրացվում է մեծածախ շուկաներում, կամ անհատական վաճառքի միջոցով:	Շուկան մասնակի թիրախավորված և սեգմենտավորված է: Շուկայում կան արդյունաբերական մթերողներ, սակայն գերակշռում են մշտական հաճախորդ հանդիսացող փոքր տնտեսությունները:	Շուկան թիրախավորված և սեգմենտավորված է: Առկա են սահմանափակ թվով մշտական մթերողներ: Հանդիսանում է թթու կաթնամթերքի և պանրի արտադրության արժեզրթայի կարևորագույն օղակը:	Շուկան բավականին թիրախավորված և սեգմենտավորված է: Հիմնականում իրացվում է մեծածախ միջնորդներին: Առկա է նաև որոշակի մանրածախ վաճառք:	Շուկան մասնակի թիրախավորված է և սեգմենտավորված է: Շուկայում կան արդյունաբերական մթերողներ, առկա է նաև մանրածախ վաճառք:

Նկար 5 - Գերակա ենթաօլորտների արտադրանքի շուկայի պահանջարկը

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Շուկայական պահանջարկը բավարար բարձր է, սակայն մեծածախ գները կարգավորում են գևորդները: Շուկայում առկա են ցիկլային հագեցումներ՝ կախված կոնկրետ տարվա արտադրության ծավալից:	Շուկայի պահանջարկը առկա է մեծածախ քանակների համար: Փոքր քանակով արտադրությունը հիմնականում միտված է սեփական սպառմանը:	Շուկայի պահանջարկը որոշ ապրանքատեսակների մասով բարձր է, սակայն առկա է սեզոնայնություն, ինչպես նաև տատանումներ՝ շուկայում Նոր դերակատարների կամ կոնկրետ տարվա արտադրության ծավալից կախված:	Շուկայի պահանջարկը և ապրանքայնության մակարդակը զգալի բարձր է: Մշտապես առկա է պահանջարկ ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին գևորդների կողմից: Կան բազմաթիվ մշտական հաճախորդներ, կիրառվում է պատվերների մոտեցումը:	Շուկայի պահանջարկը և ապրանքայնության մակարդակը բարձր է: Առկա են բազմաթիվ մեծածախ գևորդներ, որոնք հետաքրքրված են հնարավորինս մեծ քանակներ ձեռքբերելով: Առկա է նաև պահանջարկ փոքր և միջին վերամշակողների կողմից	Շուկայի պահանջարկը և ապրանքայնության մակարդակը զգալի բարձր է: Արտադրանքը պահանջված է ցանկացած քանակությամբ:	Շուկայի պահանջարկը և ապրանքայնության մակարդակը զգալի բարձր է: Արտադրանքը պահանջված է ցանկացած քանակությամբ թե ներքին և թե արտաքին շուկայում:

Նկար 6 – Գերակա ենթաոլորտներում ուղղակի և անուղղակի մրցակցությունը

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Արժեշոթայում ներգրավված ֆերմերները շատ են, ներառյալ նաև բավարար խոշոր արտադրողները: Հիմնական շուկայում մրցակցություն կա նաև այլ մարզերի արտադրողների, երբեմն նաև ներմուծողների հետ:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները շատ են, սակայն հիմնականում արտադրում են սեփական սպառման համար: Մրցակցությունը ավելի շատ հացահատիկ և այլուր ներկրողների հետ է:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները շատ են, սակայն մեծամասամբ արտադրում են սեփական սպառման համար: Մրցակցությունը ավելի շատ այլ մարզերի արտադրողների հետ է:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները սահմանափակ են: Դրա պատճառով մրցակցությունը շատ սուր չէ, թեև մայիս-սեպտեմբեր ամիսներին որոշ չափով սրվում է: Այնուամենայնիվ մշտական հաճախորդների առկայությունը նվազեցնում է ուղղակի մրցակցության ազդեցությունը:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները շատ են, ներառյալ նաև բավարար խոշոր արտադրողները: Մրցակցությունը սրվում է հատկապես ապրիլ - օգոստոս ամիսներին: Առկա է անուղղակի մրցակցություն կաթի փոշի ներկրողների և արտադրողների կողմից:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները շատ են, ներառյալ նաև բավարար խոշոր արտադրողները: Մրցակցությունը սուր է մեծածախ մատակարարումների համար: Առկա է սուր մրցակցություն ներմուծողների կողմից:	Արժեշոթայում ներգրավված ֆերմերները սահմանափակ են: Չկա շատ սուր մրցակցություն: Անուղղակի մրցակից են հանդիսանում վայրի հավաք իրականացնողները:

Նկար 7 - Գերակա ենթաոլորտներում փոխարինող ապրանքներ

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Փոխարինող ապրանքներից են բանջարեղենը, հատիկընդեղենը: Շատ է փոխարինվում հատկապես դիետա պահպանող սպառողների կողմից:	Փոխարինող ապրանքներից են հատկընդեղենը, հնդկաձավարը: Շատ է փոխարինվում հատկապես դիետա պահպանող սպառողների կողմից:	Փոխարինող ապրանքներից են կարտոֆիլը, հացահատիկը:	Փոխարինող այլ ապրանքներ սկզբունքորեն չկան՝ մեղրի յուրահատկության շնորհիվ: Սակայն ապրանքայնության մակարդակը շատ բարձր չէ և ֆերմերների մոտ	Փոխարինող է ներմուծվող կաթի փոշին: Որոշ խոշոր մթերողներ իրենց արտադրության մի փոքր մասն են կազմակերպում թարմ մթերված կաթով: Փոխարինող է նաև այլ	Փոխարինող է ներմուծված (սառեցված) միսը, ինչպես նաև այլ կենդանիների՝ ոչխարի, խոզի, թռչնի միսը:	Անմիջական փոխարինող ապրանքներ առանձնապես շատ չեն: Որպես փոխարինող կարող են հանդիսանալ մրգերը կամ

			տարածված է սեփական բերքը սպառելու սովորույթը:	կենդանիների՝ ոչխարի, այծի, գոմեշի կաթը:		ներմուծվող ապրանքները:
--	--	--	---	---	--	------------------------

Նկար 8 - Գերակա ենթաոլորտներում արտահանման հնարավորությունները

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Գնահատականը մի փոքր իրականից բարձր է: Նախորդ տարիներին արձանագրվել է ոչ մեծ ծավալի արտահանում, 2021 թ. աճ է նկատվում: Արտահանման աշխարհագրությունը սահմանափակ է՝ հիմնականում ՌԴ, Վրաստան:	Արտահանման ներուժը խիստ սահմանափակ է: Նախորդ տարիներին արտահանման ծավալները աննշան են եղել արտադրության ծավալի համեմատ:	Արտահանումը սահմանափակ է: Թեև նկատվում է արտահանման ծավալների թեթև աճ, սակայն արտահանման աշխարհագրությունը սահմանափակ է՝ ՌԴ կամ Վրաստան:	Առկա է արտահանման ներուժ: Վերջին տարիներին նկատվում է արտահանման ծավալների աճ: Կանաչ/կայուն գյուղատնտեսական գործելակերպերի դեպքում արտահանման ավելի լայն հնարավորություններ են բացվում դեպի ԵՄ և այլ շուկաներ:	Իր ապրանքային բնութագրի պատճառով թարմ կաթը որևէ նկատելի քանակով ելթակա չէ արտահանման: Փոխարենը առկա է վերամշակված կաթի՝ հատկապես պանրի արտահանման լրջագույն աճող ներուժ:	Իր ապրանքային բնութագրի, քանակի սահմանափակության և այլ երկրներում մսի ներմուծման կարգավորումների խստության պատճառով տավարի թարմ միսը արտահանման լուրջ ներուժ չունի: Փոխարենը առկա է որոշակի սահմանափակ ներուժ վերամշակված բարձրարժեք մսամթերքի՝ երշիկեղենի արտահանման համար:	Արտահանման պոտենցիալն առկա է, հատկապես վերամշակված հատապտուղների դեպքում (խորը սառեցում, չիր և այլն): Հաշվի առնելով հատապտուղների կյանքի ցիկլը, թարմ հատապտուղների արտահանումը սահմանափակ է:

Նկար 9 - Գերակա ենթաոլորտներում բնապահպանական ազդեցությունը

Կարտոֆիլ	Հացահատիկ	Բանջարանոցային	Մեղր	Կովի կաթ	Տավարի միս	Հատապտուղ
Արդյունավետ արդյունաբերական արտադրությունը	Արդյունավետ արդյունաբերական արտադրությունը	Հնարավոր է կիրառել կայուն տեխնոլոգիաներ և համակարգեր: Ունի	Դրական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա:	ԽԵԿ բուծությունն ունի երկակի բնապահպանական ազդեցությունը: Բնակավայրերին մոտակա արոտներում ԽԵԿ		Հնարավոր է կիրառել կայուն տեխնոլոգիաներ և համակարգեր, որը

<p>պահանջում է ծանր տեխնիկայի, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառություն, պարատանյութերի և թունաքիմիկատների օգտագործում:</p>	<p>պահանջում է ծանր տեխնիկայի, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառություն, ցանքաշրջանառության կիրառությունը սահմանափակ է:</p>	<p>վնասատուների ինտեգրված կառավարման կամ օրգանական գյուղատնտեսության անցման մեծ ներուժ:</p>	<p>Մեղվաընտանիքների պահպանման և բազմացման առումով կարևոր նշանակություն ունի կանաչ գյուղատնտեսական գործելակերպերի ներդրումը և կիրառումը ամբողջ մարզում:</p>	<p>գերարածեցումը և հեռագնա արոտներում թերարածեցումը հանգեցնում է արոտների դեգրադացման: Հեռագնա արոտներում հավասարակշռված և կայուն արածեցումը, ինչպես նաև արտադրված գոմաղբի կիրառությունը հողերի պարարտացման նպատակով դրական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա: Մյուս կողմից գոմաղբը կարող է զգալի քանակության մեթան արտանետել, ինչը հանգեցնում է օդի աղտոտման</p>	<p>Էական բացասական ազդեցություն չունի բապահպանական առումով: Վայրի հավաքի սահմանափակումը կնպաստի նաև կենսաբազմազանության պահպանմանը:</p>
---	---	---	--	---	---

6. ԳՅՈՒԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզում գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը ենթադրում է մեծ թվով բազմատեսակ գործողությունների իրականացում: Բնականաբար, ամբողջական ծավալով այդ գործողությունների ծրագրի իրագործումը ենթադրում է մեծ ծավալի ֆինանսավորում և համապատասխան ներդրումների իրականացում, ինչպես նաև ակտիվ համագործակցություն պետության, համայնքների և մասնավոր հատվածի միջև (պետություն-մասնավոր գործընկերություն): Ռազմավարության հստակության տեսանկյունից կարևոր է սահմանել այդ ֆինանսավորման ներգրավման աղբյուրները:

Հիմնական աղբյուրներով ներկայացնելու պարագայում՝ կարելի է առանձնացնել հետևյալները.

1. ՀՀ Պետական բյուջեն՝ ներառյալ սեփական և ներգրավված վարկային միջոցները (այդ թվում գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրեր, սուբվենցիոն ծրագրեր և այլն):
2. ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեները (ներառյալ տարածքային զարգացման ֆինանսավորման շրջանակներում), որոնք կհամալրվեն ՀՀ Պետական բյուջեի հատկացումներից, տեղական հարկերի և վճարների հավաքագրումից և այլն: Վերջին աղբյուրից սովորաբար համաֆինանսավորվում են տարբեր միջազգային ծրագրերի կողմից օժանդակվող համայնքային ծրագրերը:
3. Միջազգային ֆինանսական հաստատությունների և միջազգային զարգացման կազմակերպությունների կողմից Լոռու մարզում իրականացվող ծրագրերին հատկացվող ֆինանսավորումը:
4. ՀՀ Լոռու մարզում զարգացման ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային հասարակական և բարեգործական կազմակերպությունների, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, անհատ բարերարների կողմից հատկացվող ֆինանսավորումը:
5. Մասնավոր ներդրողների (այդ թվում բանկերի) կողմից տարբեր գործարար և ձեռնարկատիրական, ինչպես նաև սոցիալական ծրագրեր իրականացնելու համար հատկացվող ֆինանսավորումը: